Քրիստոնյա Հայաստան

2023, ՀՈՒԼԻՍ Բ, ԹԻՎ 14 (634)

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Հուլիսի 18-ին

Վրաստանի կրոնի հարցերով պետական գործակալության նախագահին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Վրաստանի կրոնի հարցերով պետական գործակալության նախագահ Զազա Վաշակմաձեին՝ ուղեկցությամբ ՀՀ կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների եւ կրոնի հարցերի բաժնի պետ Վարդան Ասցատրյանի:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Տ. Նաթան արք. Հովհաննիսյանը եւ ՀՀ-ում Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Գիորգի Շարվաշիձեն:

Նորին Սրբությունը կարեւորեց երկու երկրների միջեւ նման փոխայցերը, որոնք նպաստում են հայ-վրացական բարեկամական կապերի առավել ամրապնդմանն ու զարգացմանը: Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը փոխանցեց վրաց իշխանություններին՝ տիրող դժվարին իրավիճակում Հայաստանին ցուցաբերվող զորակցության, ինչպես նաեւ Ադրբեջանում պահվող հայ ռազմագերիների վերադարձման նպատակով միջնորդական ջանքերի համար:

Իր հերթին Վրաստանի կրոնի հարցերով պետական գործակալության նախագահն Ամենայն Հայոց Հայրապետին մանրամասն տեղեկություններ փոխանցեց երկրում առկա կրոնական խճապատկերի եւ կրոնական կազմակերպությունների ու ավանդական եկեղեցիների նկատմամբ տարվող պետական քաղաքականության մասին: Իր խոսքում տիար Զազա Վաշակմաձեն նաեւ անդրադարձավ Վիրահայոց թեմի հետ ձեւավորված գործակցությանը:

Զրույցի ընթացքում արծարծվեցին Վրաստանում հոգեւոր ժառանգության պահպանմանը, Հայոց եւ Վրաց եկեղեցիների փոխհարաբերություններին եւ հայ-վրացական կապերի հետագա ամրապնդմանն առնչվող հարցեր:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաեւ իր եղբայրական ողջույնն ու բարեմաղթանքները փոխանցեց Համայն Վրաստանի Իլիա Բ Կաթողիկոս-Պատրիարքին:

Երիտասարդ առաջնորդների հակակոռուպցիոն դպրոցի սաներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Իրավաբանների հայկական ասոցիացիայի Երիտասարդ առաջնորդների հակակոռուպցիոն դպրոցի շուրջ 20 ունկնդրի՝ ուղեկցությամբ Իրավաբանների հայկական ասոցիացիայի նախագահ եւ դպրոցի հիմնադիր Կարեն Զադոյանի:

Հանդիպմանն Իրավաբանների հայկական ասոցիացիայի նախագահը Նորին Սրբությանը տեղեկություններ փոխանցեց դպրոցի գործունեության վերաբերյալ՝ կարեւորելով նաեւ սաների հաղորդակցությունը հայկական հոգեւոր, մշակութային ժառանգությանը, Հայոց եկեղեցու առաքելությանն ու գործունեությանը:

Ամենայն Հայոց Հայրապետը, իր օրհնությունը բերելով երիտասարդներին, ընդգծեց, որ մարդուն մեղավոր եւ սխալ ընթացքից զերծ պահելու համար կարեւոր է նրան կրթել ու դաստիարակել ազգային ավանդներով, հոգեւոր, բարոյական արժեքներով ինչպես ընտանիքում, այնպես եւ դպրոցում եւ ուսումնական-կրթական հաստատություններում: Նորին Սրբությունն այս առնչությամբ հորդորեց դպրոցի սաներին առաջնորդվել սիրո, բարու, արդարության սկզբունքներով՝ օրինակ դառնալով երիտասարդների համար, լինել հայրենասեր եւ հետեւողական ջանքեր գործադրել ի նպաստ հայրենիքի զորացման ու շենացման:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատասխանեց դպրոցի սաների հարցերին, որոնք վերաբերում էին Արցախի եւ Հայաստանի անվտանգային խնդիրներին, հայ ժողովրդի ու եկեղեցու առջեւ ծառացած մարտահրավերների հաղթահարման ուղիներին:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

Հայ եկեղեցին եւ արեւելահայ դպրոցը ԺԹ դարի երկրորդ կեսին

Սկիզբը՝ 2022-ի թիվ 23, 2023-ի թիվ 2–3, 13

Ցարական իշխանությունները, ԺԹ դարի 60-ական թվականներից սկսյալ, հայկական դպրոցների դեմ ուղղված առավել բացահայտ եւ հետեւողական քաղաքականություն են ծավալում, ինչը միտված էր հայոց կրթօջախների ինքնուրույնությունը վերացնելուն: Համաձայն «Պոլոժենիեի» 114-րդ հոդվածի պահանջների՝ ոչ միայն ռուսաց լեզվի, այլ նաեւ ռուսաց լեզվով Ռուսաստանի պատմության եւ աշխարհագրության ավանդումը պարտադրված էր հայկական դպրոցներում: Այս քաղաքականությունն էր իրականացվում նաեւ հայկական ծխական դպրոցների նկատմամբ: Թեմական դպրոցները պահվում էին հիմնականում թեմերում գործող եկեղեցիների եկամուտների հաշվին: Նոր Նախիջեւանի թեմական դպրոցի պահպանման համար Մակար արքեպիսկոպոսը (հետագայում՝ Մակար Ա Թեղուտցի) սահմանում է թեմի 38 եկեղեցիներից ու վանքերից յուրաքանչյուրի տարեկան վճարելիք գումարի չափը:

Թեմական դպրոցների հասարակական կշիռն աճում է 1870–1880 թթ., երբ ավելանում են դասավանդվող առարկաները, իսկ ուսուցումը դառնում է հայերեն: Թեմական դպրոցները միջնակարգ ուսումնական հաստատություններ էին, որոնք հանձն էին առել հայոց թեմերի եկեղեցիների համար կրթել ու «կերտել» հոգեւոր սպասավորների: Ժամանակի ընթացքում, սակայն, հասարակական մտքի թելադրանքով դրանք հեռանում են իրենց նախնական նպատակից եւ որդեգրում աշխարհիկ պահանջների իրականացման գործընթացը՝ հայկական ծխական դպրոցների ուսուցիչների եւ հայ մշակույթի ու հասարակական մտքի զարգացման համար մտավորականների պատրաստումը:

Արցախում՝ Շուշիում, գործող թեմական հոգեւոր դպրոցի պատմությունը սկզբնավորվում է դեռեւս 1836 թ. «Պոլոժենիեից»: Այս դպրոցի առաջին տարիների գործունեության մասին մեր ունեցած տեղեկությունները սահմանափակ են: Երբ կարդում ենք դպրոցի պատմությունը, տեսնում ենք, որ այն հիմնադրվել է 1838 թ. հունիսի 22-ին: Շուշիում գործող հայոց հոգեւոր դպրոցն ունեցել է 6 դասարան՝ «Շուշուայ հոգեւոր դպրոցը կազմուած է 6 դասատնից....», իսկ ուսման տեւողությունը եղել է 9 տարի (*Լէօ,* Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգեւոր դպրոցի (1838–1913), հտ. Բ, Թիֆլիս, 1914, էջ 189): ➥ *էջ 2*



Անիրավ տնտեսի առակը

Սկիզբը՝ թիվ 6–8, 13

Անիրավ տնտեսի առակի որոշ դժվարընկալելի հատվածներ հիրավի մեկնաբանման կարիք ունեն: Եթե տնտեսը պետք է օրինակելի համարվեր ոչ միայն իր հնարամտությամբ, այլ նաեւ իր գործողություններով, ապա ինչո՞ւ է նա «անիրավ տնտես» (tes adikias) կոչվում. «Եվ տերը գովեց անիրավ տնտեսին, որովհետեւ հնարամտությամբ գործեց....» (Ղուկ. ԺԶ 8): Նախ՝ անհրաժեշտ է կապ տեսնել անիրավ տնտեսի եւ անիրավ դատավորի միջեւ: Դատավորը ներկայացվում է որպես անիրավ մարդ, որը, այնուամենայնիվ, ճնշման ներքո կայացնում է արդար դատավճիռ: Հետեւաբար «անիրավ» բառը ոչ թե նպատակ ունի երկու առակներն ավարտին հասցնելու, այլ հենց սկզբից ընդգծելու դատավորի եւ տնտեսի բնավորությունների ընդհանրությունը կամ ավելի ճիշտ՝ նրանց կերպարների ընկալման ընդհանրությունը:

Սա իսկապես այն հատվածն է, որտեղ կարելի է հեգնանք նկատել: Անիրավ տնտեսը, Ղուկասի ավետարանի ԺԵ գլխում նկարագրված մաքսավորների նման, ստվերային գործարքի մեջ է ներքաշվում, ինչին դեմ էին փարիսեցիները. նա ծառայում է անիրավ մամոնային: Որքան էլ զարմանալի է, նման անձնավորությունն այնուամենայնիվ կարող էր ճիշտ վարվել եւ նույնիսկ դառնալ օրինակելի:

Հենց այսպիսի հեգնանք է նկատվում Հիսուսի խոսքերում. «Ես չեմ եկել արդարներին կանչելու, այլ մեղավորներին՝ ապաշխարության» (Ղուկ. Ե 32). հեգնանք առ այն, թե ինչպես են որոշ խմբեր (փարիսեցիներ) իրենց նույնացնում արդարների, մյուսներին՝ անարդարների հետ:

Այսպիսով՝ աշակերտներին հորդորվում է իբրեւ օրինակ ունենալ «այս աշխարհի որդիներին», այլ ոչ թե «լույսի որդիներին» (տե՛ս Ղուկ. ԺԶ 8): «Լույսի որդիներ»-ը, ինչպես իրենց հորջորջում էին Կումրանի աղանդավորները, եւ «ազգերի լույս»-ը, ինչպես իրենց անվանում էին փարիսեցիները (տե՛ս Ես. ԽԲ 6), վստահելի չէին: Այդ իսկ պատճառով Հիսուս իմաստության եւ հնազանդության օրինակներ էր բերում նրա՛նց շարքերից, որոնց արհամարհում էին, այսպես կոչված, «լույսի որդիները»:

«Ընկերներ ձեռք բերել անազնիվ ճանապարհով՝ հարստության օգնությամբ, որպեսզի երբ նյութական միջոցներն սպառվեն, ընկերները քեզ ընդունեն իրենց հարկերի ներքո». ժամանակակից ընթերցողն սկսում է տարակուսել այս հակասական մտքի շուրջ՝ արդյո՞ք կարելի է գումարի կամ ունեցվածքի համար ընկերներ ձեռք բերել... Սակայն այս աշխարհն անարդար է, ուստի անհրաժեշտ է այսաշխարհային անիրավ հարստությունն օգտագործել հնարավորին չափ ճիշտ:

Բոնավենտուրան (1221–1274 թթ.)՝ ֆրանցիսկյան փիլիսոփա, մանկավարժ եւ միջնադարյան մեկնիչ, անիրավ տնտեսի հնարամտության մեջ եւ գործողություններում դրական դրդապատճառ էր նկատում: Ըստ նրա՝ տնտեսի գործողությունները միտված էին ընկերներ ձեռք բերելուն եւ ոչ թե իր համար ամեն կերպ գումար վաստակելուն: Ղուկասի ավետարանի ԺԲ գլխի 42–46-ի «հավատարիմ եւ իմաստուն» տնտեսի նման նա օգուտ էր բերում: Գումարը, իհարկե, մի օր կսպառվեր. այն «կփչանար» (ի տարբերություն Ղուկ. ԺԲ 33-ի «գանձի, որը չի կորչում»): Կատարված գործարքը եւս կմոռացվեր. բարեկամներ ձեռք բերելը տնտեսի համար առավել կարեւոր էր:

Տնտեսն իրապես օրինակ է մի մարդու, որը «շատ քիչ» բանում էր «հավատարիմ» եղել... Սակայն նա իր հնարամտությամբ գտնում է ոչ միայն սեփական խնդիրներից փախչելու, այլ նաեւ Աստծու ուխտին հավատարիմ մնալու միջոցը, քանի որ արդարություն է գործադրում աղքատների հանդեպ:

Անիրավ տնտեսն իր կերպարով հակադրվում է փարիսեցիներին, որոնք անտեսում եւ չէին հետեւում աստվածային պատվիրանին, այն է՝ չէին իրագործում Աստծու արդարությունն ու սերը:

Անհրաժեշտ է նշել նաեւ, որ տնտեսը չէր փորձում ծառայել Աստծուն եւ մամոնային միաժամանակ. իրականում նա չէր ստանում անձնական որեւէ շահույթ: Իր գործողություններով նա միայն վերականգնում է իր պաշտոնը՝ գոյատեւման աղբյուրը, եւ նա այդ ամենն անում է հնարամտությամբ՝ Աստծուն վեր դասելով իր մեծահարուստ տիրոջից:

Ինչպես «Անմիտ մեծահարուստի» առակը, այս առակը եւս բովանդակում է բարոյական թաքնված մարտահրավերներ, քանի որ պարտքերի մարումն ու տոկոսադրույքների չեղարկումը ոչ միայն արդարացի են, այլեւ բացում են նոր հնարավորություններ: Նույնիսկ մեծահարուստ տերը կարող է մեղմել իր զայրույթը եւ փոխել իր դիրքորոշումը, ուստի այս առակն ուղերձ է նաեւ նման մարդկանց: «Անիրավ տնտեսի» առակի կերպարներն իմաստության եւ արդարության հետաքրքիր օրինակներ են:

ԱՆՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Հայ Եկեղեցին եւ արեւելահայ դպրոցը...

↩ *էջ 1*

Մեզ հասած սակավ տեղեկություններից պարզ է դառնում, որ 1840 թ. դպրոցում դասավանդվել են Սրբազան պատմություն, Օրենք աստվածային, հայոց լեզվի քերականություն, ռուսերենի քերականություն եւ ընթերցանություն, երգեցողություն, թվաբանություն ու պարսկերեն: Դպրոցը հիմնադրումից ի վեր գործել է նյութական կարիքի պայմաններում, իսկ 1843 թ. դպրոցի պարտքը մեծ գումար է կազմում՝ 3000 ռուբլի, այդ թվում նաեւ՝ ուսումնական շենքի վարձավճարը՝ 400 ռուբլի:

1844 թ. ուսուցիչները հրաժարվում են այլեւս անվճար աշխատելուց, այդ իսկ պատճառով դպրոցն այդ տարվա մարտի 1-ից փակվում է: Մեկ տարի անց՝ 1845 թ. հուլիսի 17-ին, այն վերաբացվում է: Դպրոցը, որոշ հանգամանքների բերումով, կրկին փակվում է 1852 թ. Ներսես Ե Աշտարակեցու կարգադրությամբ (1843–1857 թթ.): Այն դարձյալ վերաբացվում է երեք տարի անց՝ 1855 թ.՝ ունենալով միայն 4 նախապատրաստական դասարան եւ 86 աշակերտ:

1860 թ. ապրիլի 12-ին Ս. Էջմիածնի Սինոդը հաստատում է թեմական դպրոցների կանոնադրությունը: Նոր կանոնադրության համաձայն՝ դպրոցի եկամուտներն առավել շատ պետք է լինեին: Թեմի եկեղեցիների ծախսերը հոգալուց հետո մնացյալ ողջ գումարը փոխանցվում էր թեմական դպրոցին, ըստ այդմ՝ 1861 թ. դպրոցական եկամուտը 10 600 ռուբլի է կազմում: 1860–1863 թթ. դպրոցը երեք տեսուչ է ունենում՝ Հ. Մելքոնյան, Ն. Աթաբեկյան եւ Գ. Աղափիրյան:

1863 թ. հոկտեմբերի 1-ին հոգաբարձուներ Համբարձում Հախումյանի եւ Հարություն Շիյանի միջնորդությամբ Պ. Շանշյանը նշանակվում է Շուշիի թեմական դպրոցի տեսուչ: Պ. Շանշյանի տեսչության ժամանակ նախկինում հոգեւոր ճեմարան, ապա սեմինարիա եւ հոգեւոր դպրոց կոչվող հաստատությունը հայտնի է դառնում նաեւ «Եղիշյան ազգային հոգեւոր դպրոց» անվամբ՝ ի պատիվ Եղիշե պատմիչի: Այս ընթացքում դպրոցը մեծ առաջընթաց է ունենում, կանոնակարգվում են ուսումնական ծրագրերը, դասաժամերի քանակը, դասավանդվելիք առարկաները եւ այլն: 1864 թ. Շուշիում անհամաձայնություններ են առաջանում Պ. Շանշյանի եւ թեմական առաջնորդական տեղապահ Գեւորգ վրդ. Արակյանի միջեւ: Արդյունքում Պ. Շանշյանը թողնում է տեսչի պաշտոնը եւ հեռանում Թիֆլիս: Լեոն Պ. Շանշյանի գործունեության մասին վկայում է. «Ընդամենը մի տարի տեւեց Շանշեանի պաշտօնավարութիւնը Շուշիում, բայց նրա գործունէութիւնը, նրա անձնաւորութիւնը, նրա պաշտպանած դատը եւ նրա պայծառ գաղափարները ստեղծեցին նրա համար անմահ մի հմայք, իսկ դպրոցի այդ կարճ ժամանակամիջոցը դարձաւ մինչեւ այսօր էլ ժողովրդի մէջ ապրող նուիրական հասկացողութիւն, սրբազան աւանդութիւն, որի մէջ հերոսացած է մեր վերածնութեան ժամանակների «լաւ» մարդը» (*Լէօ,* Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգեւոր դպրոցի (1838–1913 թթ.), էջ 347): Պ. Շանշյանի հեռանալուց հետո դպրոցն ուսումնական հարցերում նահանջում է: 1865 թ. թեմական դպրոցի տեսուչ է նշանակվում Մոսկվայի համալսարանի շրջանավարտ Մ. Հախումյանը, փոխվում է հոգաբարձուների կազմը, սակայն դպրոցի վիճակը չի բարելավվում: 1875 թ. առաջնորդական փոխանորդի եւ կոնսիստորիայի նախանդամի պաշտոնով Արցախ է գալիս Գեւորգ վրդ. Սուրենյանցը եւ ստանձնում դպրոցի տեսչի եւ ավագ ուսուցչի պարտականությունները. նա աշխատում է մինչեւ 1876 թ. հուլիսը: Գեւորգ վրդ. Սուրենյանցին հնարավորություն է տրվում իրագործելու մտահղացումները: Վերջինիս ջանքերով բացվում են երկու՝ արական ծխական եւ Հռիփսիմյան դպրոցները: Ս. Խուդոյանը նշում է, որ իգական միջնակարգ Հռիփսիմյան դպրոցը 1877 թ. ունեցել է 4 ուսուցիչ եւ 70 աշակերտուհի, իսկ 1881-ին վերջիններիս թիվը հասնում էր 120-ի (*Ս. Խուդոյան*, Արեւելահայ դպրոցները 1830–1920 թթ., Երեւան, 1987, էջ 378): Զգալի փոփոխություններ են իրականացվում, որոնք նախանշում են թեմական դպրոցի զարգացման հետագա ընթացքը: Դպրոցի նոր տեսուչ է նշանակվում Վ. Պապաջանյանը, Թիֆլիսից հրավիրվում են ուսուցիչներ Ա. Թոխմախյանը, Հ. Լալայանցը եւ Գ. Պապյանը: Ժամանակի առաջադեմ հոգեւորականներից Արիստակես վրդ. Սեդրակյանն առաջարկում է, որ բոլոր առարկաները դասավանդվեն հայերեն: Վ. Պապաջանյանը, սակայն, չի համաձայնում վերջինիս հետ եւ ստիպված 1878 թ. հեռանում է: 1879 թ. դպրոցի տեսուչ է նշանակվում Սանկտ Պետերբուրգի զինվորական ակադեմիայի շրջանավարտ Բախշիբեկ Աղասարյանը, որը երեք տարի անվճար աշխատելու պայմանով գալիս է Շուշի: Բ. Աղասարյանն ընդգծված եռանդով է անցնում աշխատանքի. նրա տեսչության շրջանում Մ. Սանասարյանը դպրոցի ֆիզիկայի դասասենյակի համար անհրաժեշտ սարքեր է նվիրում: Սկզբնավորվում է բնական գիտությունների զարգացումը: Նմանօրինակ մի շարք նորամուծություններից հետո թեմական դպրոցում աշակերտների թիվը հասնում է 334-ի, իսկ Հռիփսիմյան դպրոցում՝ 113-ի:

Կանոնադրության համաձայն՝ դպրոցը բաժանվում է երեք մասի՝ «նախապատրաստական, դպրոց ու հոգեւորական մաս»: Նախապատրաստական մասը կազմում էին Շուշիի եւ Ղարաբաղի թեմի բոլոր ծխական ուսումնարանները, որոնք կազմված էին երկու դասատնից: Թեմի ծխական ուսումնարանները ենթարկվում էին հոգեւոր տեսչությանը. կանոնադրության մեջ այս առնչությամբ գրված է. «....գլխաւոր տեսչութիւնն ուսումնական մասի կողմանէ ամէն մասնաւոր ուսումնարաններու վրայ ունի Շուշւոյ հոգեւոր դպրոցի տեսուչը....»: «Դպրոց» մասն ամփոփում էր ավանդվող առարկաների ցանկը: Ուսումնական ժողովը, որոշակի հանգամանքներից ելնելով, իրավունք ուներ դասավանդվող առարկաները փոփոխելու: Նաեւ նշվում է, որ ուսուցումը պետք է իրականացվի հայերեն՝ «....հայ լեզուով հանդերձ թարգմանութեամբ....» (*Լէօ,* նշվ. աշխ., էջ 257): Ա, Բ, Գ դասատներն անվանվում էին ստորին, իսկ Դ-ն, Ե-ն, Զ-ն՝ վերին: Դպրոցը գործունեության սկզբնական շրջանում 6 դասատուն չի ունենում. դրանք առաջանում են ժամանակի ընթացքում՝ աշակերտների թվի աճի պայմաններում: Ըստ այդմ՝ 1860 թ. ունեցել է 1 նախապատրաստական եւ 2 հիմնական, 1888-ին՝ 3 նախապատրաստական եւ 4 հիմնական դասարան: Իսկ Ե եւ Զ դասարանների մասին նշվում է. «....1889-ին բացվել է 5-րդ, հաջորդ տարին՝ 6-րդ դասարանը....» («Հայկական սովետական հանրագիտարան», հտ. 8, էջ 601): Երրորդ՝ «հոգեւորական մասի» առնչությամբ գրված է. «Այս երրորդ մասն չէ մէկ առանձին ուսումնարան, այլ սրան կազմում են դպրոցի այն աշակերտները, որոնք որ դպրոցի մէջ ուսումն աւարտելուց յետոյ կայցնեն յոժարութիւն հոգեւորական կոչումն ստանալու» (*Լէօ,* նշվ. աշխ., էջ 258): Շուշիում գործող հոգեւոր դպրոցի նպատակը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու համար արժանավոր հոգեւորականներ, իսկ հայ հասարակության համար լուսավորյալ անհատներ կրթելն ու դաստիարակելն էր:

Շարունակելի

Զաքարա սրկ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
Անահիտ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Յակոբ Պատրիարք Նալեան

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՈՒՍԱՆԵԼԻ

Սկիզբը՝ թիւ 9–13

Հաւատքի աստիճաններուն մեկնութիւնը

Ը

Ութերորդ աստիճանն այս է. *այնտեղէն պիտի գայ դատելու համար ողջերն ու մեռելները.* ասիկա Մատթէոս աւետարանիչն ըսաւ:

Այս մէկը մեզի կ'ուսուցանէ Քրիստոս Աստուծոյ ահարկութիւնը: Տես եւ միտքիդ մէջ պահէ, թէ Քրիստոս առաջին անգամ երբ եկաւ խաչին վրայ մեզի համար մեռնելու՝ Աստուծոյ Գառնուկ՝ մեղքերը վերցնող կոչուեցաւ, ինչպէս Յովհաննէս Մկրտիչն ըսաւ: Սակայն երկրորդ գալուստի ժամանակ առիւծ ու ասլան պիտի կոչուի, ինչպէս կ'ըսէ Միքիա մարգարէն, թէ՝ առիւծը պիտի գոչէ, եւ ո՞վ արդեօք պիտի չսարսի:

Տակաւին՝ այս առիւծը՝ Քրիստոս, դատաստանին օրը երկուքի պիտի պատռէ մարդկութիւնը. չարերն ու բարիներն իրարմէ պիտի զատէ: Բարիները արքայութեան աջ կողմը պիտի դասէ, իսկ չարերը՝ ձախ կողմը՝ դժոխք պիտի ղրկէ:

Առաջին գալուստին ծածուկ կերպով եկաւ, իսկ երկրորդ գալուստին փողով ու հրեշտակներու բազմութեամբ պիտի գայ:

Առաջին անգամը որպէս ցող եկաւ, իսկ կատարածին՝ հուրով ու բարկութեամբ:

Առաջին անգամը փրկելու եկաւ, իսկ երկրորդին չարերը դատապարտելու համար պիտի գայ: Սակայն ո՛չ միայն մեղաւորները դատելու պիտի գայ, որոնք մեղքերով մեռած են, այլ արդարները եւս, որոնք բարի գործերով կենդանի են:

Մեծ սարսափ է կենդանի Աստուծոյ ձեռքն իյնալը, եթէ արդարը հազիւ կ'ապրի, ապա մեղաւորն ու ամբարիշտը ո՞ւր պիտի երեւին: Այդ պատճառով Դաւիթ կ'ըսէր, թէ՝ ծառայիդ հետ դատաստանի մի՛ մտներ, որովհետեւ Քու դիմացդ ո՛չ մէկ կենդանի կրնայ արդարանալ:

Սակայն Քրիստոս արդարները կը դատէ ու կը փառաւորէ հրեշտակներուն դիմաց, իսկ մեղաւորները կը դատէ ու կը դատապարտէ յաւիտենական կրակին:

Արդարեւ՝ մարդ ինչքա՞ն քարսիրտ պիտի ըլլայ, որ լսելով այս սարսռելի օրուան մասին՝ պատրաստութիւն չի՛ տեսներ ու տակաւին մեղք գործելէ չի՛ դադրիր. կարծէք այդպիսի մարդն ապառաժ քար ու երկաթէ աղիք ըլլայ...

Սուրբ Մատթէոսն այն բիւրեղ ապակին,
Երկրորդ գալուստին մասին զօրաւոր կերպով կը վկայէ,
Իր Հօր փառքով՝ թէ ահեղ Տէրը պիտի գայ,
Սուրբերը պիտի պսակէ ու շքեղ դարձնէ:

Թ

Իններորդ աստիճանն այս էր. *կը հաւատամ Սուրբ Հոգիին:* Ասիկա Յակոբը՝ Ալփէոսի որդին ըսաւ:

Այս մէկը մեզի աստուածային երրորդ անձին մասին կ'ուսուցանէ. որովհետեւ, ինչպէս Հայրն Աստուած յաւիտեաններէն Միածին Որդին ծնաւ, այդպէս ալ յաւիտեաններէն իբրեւ անհուն առատաբաշխութիւն եւ իբրեւ յորդահոս գետ մը բխեց նաեւ Սուրբ Հոգին, ինչպէս Քրիստոս ըսաւ, թէ՝ ճշմարտութեան Հոգին Հօրմէն կ'ելլէ: Քանի որ Իր աստուածային ծնունդը յայտնելով ըսաւ, թէ՝ Հօրմէն ելայ ու աշխարհ եկայ. այդպէս ալ մեզի Սուրբ Հոգիին բխումը կը յայտնէ՝ ըսելով, թէ՝ ճշմարտութեան Հոգին Հօրմէն կ'ելլէ:

Ա՛յս է ճշմարտութեան միակ պարզ ու յստակ վարդապետութիւնը: Այս մասին ո՛չ մարգարէները, ո՛չ առաքեալները, ո՛չ հրեշտակները եւ ո՛չ ալ բոլոր սուրբերը կրնան այլ տեսութիւն մը [վարդապետութիւն] մը տալ:

Տակաւին, թէեւ առաքեալները հաւատքին տասնչորս աստիճանները Աւետարանէն առին, սակայն այս խօսքն Ինք՝ Քրիստոս, Իր անսուտ բերանով վկայեց, թէ՝ ճշմարտութեան Հոգին Հօրմէն կ'ելլէ:

Այսպէս ըսին նաեւ Կոստանդնուպոլսոյ սուրբ ժողովին մէջ 150 հայրապետները, թէ՝ կը հաւատանք Սուրբ Հոգիին, Տիրոջ եւ Կենդանարարին, որ Հօրմէն կը բխի, որ Հօր եւ Որդիին հետ միասին կը փառաւորուի ու կ'երկրպագուի: Իսկ Քաղկեդոնի ժողովին մէջ այսպէս ըսին, թէ՝ կը հաւատանք Սուրբ Հոգիին, որ Հօրմէ է, իսկ ով որ բան մը աւելցնէ, նզովեալ ըլլայ: Ըսել կ'ուզեն, թէ ով որ աւելցնէ ու ըսէ թէ՝ եւ Որդիէն:

*Յակոբոս Ալփէոսի որդին՝ տպագիոն (*թանկագին քարի տեսակ*) քար,*
Որ դեղին սէյլան կ'ըսուի իր անունը,
Կը հաւատայ Սուրբ Հոգիին անհուն,
Որ զԱյն ունեցողին՝ միտքով իմաստուն կը դարձնէ:

Ժ

Տասներորդն այս է. *եւ Սուրբ Կաթուղիկէ Եկեղեցիին ու սուրբերու հաղորդակցութեան.* այս մէկը Սիմոն Կանանացին ըսաւ:

Ասիկա կ'ուսուցանէ մեզի հաւատալ մէկ, սուրբ, Կաթուղիկէ եւ Առաքելական Եկեղեցիին: Այս Եկեղեցի անունը քարաշէն ու փայտաշէն եկեղեցւոյ մասին չէ, այլ բոլոր ճշմարիտ քրիստոնեայ հաւատացեալներուն համար ըսուած է: Ճշմարիտ հաւատացեալներ այն պատճառով ըսի, որովհետեւ հերձուածողները, հերետիկոսներն ու բանադրուած մարդիկը Եկեղեցւոյ ճշմարիտ անդամներ չեն: Սակայն Մկրտութեան խորհուրդն ունին, Մկրտութեան խորհուրդով միաւորուած են Եկեղեցւոյ. բայց, գօսացածներու եւ ծառերու չորցած ոստերու նման են, որոնք թէեւ ձեւով մը ծառին կցուած են, սակայն չորութեան պատճառով արմատէն խոնաւութիւն (սնունդ) չեն կրնար քաշել ու կանաչնալ: Այսպէս են նաեւ բոլոր հերձուածողները, հերետիկոսներն ու բանադրուած մարդիկը, որոնք թէեւ Մկրտութեան խորհուրդով Եկեղեցիին կցուած են, սակայն բարի գործերու մէջ չեն կրնար աճիլ ու զօրանալ, քանի որ ամէն տեսակի բարեգործութեան արմատն ու հիմքը հաւատքն է: Տակաւին՝ հիմքը երբ խախուտ ըլլայ, վրայի շինութիւններն ալ անհիմք կ'ըլլան: Արդարեւ՝ այդպիսի խախուտ հաւատքի տէր ու թերակատար հաւատացողին գործերն ալ թերի ու անհիմք կ'ըլլան եւ չեն կրնար մարդուն արքայութիւն հասցնել:



Ա՛յս եւս իմացիր, թէ ինչ կը նշանակէ հերձուածող, եւ ինչ՝ հերետիկոս:

Հերձուածողն ան է, որ թէեւ հաւատքի բոլոր աստիճաններուն կը հաւատայ, սակայն ծուռ կերպով կը մեկնէ, այսինքն՝ թէ՛ ըսողին ըսել ուզած միտքէն տարբեր բան կ'ըսէ եւ թէ՛ Սուրբ Եկեղեցւոյ:

Իսկ հերետիկոսն ան է, որ հաւատքի մասերէն մէկը կամ մի քանիսը կ'ուրանայ. ինչպէս օրինակ՝ Արիոսը, որ Քրիստոսի բնութեամբ Աստուծոյ Որդի ըլլալն ուրացաւ, իսկ Մակեդոնը, որ Սուրբ Հոգիին աստուածութիւնն ուրացաւ, իսկ Նեստորը, որ Քրիստոսի բնութեամբ մարմինին միանալն ուրացաւ, ու Սուրբ Կոյսն Աստուածածին եւ Աստուծոյ մայր չխոստովանեցաւ: Այսպիսիներուն Եկեղեցւոյ վարդապետները տեսական հերետիկոսներ կ'ըսեն, որովհետեւ իրենք սահմանած են չար ու անընդունելի հերետիկոսութիւնը: Իսկ ան, որ անոնց կը հետեւի ու անոնց ըսածները կ'ընդունի, այդպիսիին նիւթական հերետիկոս կ'ըսեն, որովհետեւ անոնցմէ նիւթաւորուած ու յառաջ եկած է:

Իսկ բանադրուածն ան է, որ եկեղեցական հաղորդութենէն ու սուրբ խորհուրդը ճաշակելէ կը զրկուի: Այդպիսիին ըսաւ Սիմոն առաքեալը, թէ՝ *սուրբերու հաղորդակցութենէն*, այսինքն՝ ի մասնակցութիւն սուրբ հաւատացեալներուն, աղօթքներուն ու եկեղեցւոյ այցելութեան: Ինչպէս Դաւիթը կ'ըսէ, թէ՝ զիս հաղորդակից ըրէ, Տէր, Քեզմէ երկիւղածներուն: Իսկ Սուրբ Եկեղեցին Արեւագալի ժամերգութեան մէջ կ'աղօթէ՝ ըսելով, թէ՝ *արեւելքէն մինչեւ արեւմուտք, քրիստոնեայ բոլոր երկիրներուն մէջ, ուր Տիրոջ անունը սրբութեամբ կը կանչեն, Տէր, անոնց աղօթքներով ու բարեխօսութեամբ, ողորմէ՛ մեզի:*

Ա՛յս եւս իմացիր, թէ Եկեղեցւոյ Հայրն Աստուած է, որովհետեւ Եկեղեցին դուստր կ'ըսուի, իսկ Եկեղեցւոյ Փեսան Քրիստոս է, ինչպէս ըսաւ Սուրբ Յովհաննէս Մկրտիչը, թէ՝ ով որ հարսն ունի, ա՛ն է փեսան: Սուրբ Գրիգոր Նարեկացին ալ կ'ըսէ, թէ՝ ասոր հարսնութեան փեսան Աստուծոյ Որդին է: Իսկ Եկեղեցւոյ պարգեւը, ընծան, սրբարարն ու կառավարիչը Սուրբ Հոգին՝ Աստուած Ճշմարիտն է:

Սուրբ Սիմոնը ոսկեբիւրեղ, ոսկեցօղ կանաչեայ քար է,
Սուրբ Եկեղեցւոյ կը հաւատայ, եւ մեղքերու թողութեան վկայ է:

Շարունակելի

Փոխադրութիւնը՝
Վարանդ (Յակոբ) ՔՈՐԹՄՈՍԵԱՆԻ

Հոռմայրի Ս. Նշան վանք

Սկիզբը՝ թիվ 13

2017 թ. դեկտեմբերի 11-ին Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ արք. Չուլջյանը կատարել է վերանորոգված սրբավայրի վերաօծման հանդիսավոր արարողությունը: Այդ պատմական ու հիշարժան օրվա տոնակատարությանը հավատքով եւ ուխտով մասնակցում էին Օձուն գյուղի եւ մոտակա բնակավայրերի բարեպաշտ հայորդիներ՝ ծերեր, երիտասարդներ, կանայք ու երեխաներ, մեծաթիվ հյուրեր: Օծվեցին եւ ապա տեղադրվեցին զույգ եկեղեցիների գագաթների խաչերը, այնուհետեւ աղոթատան ներսում օծվեցին պատարագի սուրբ սեղանը եւ երկու խորանները: Թեմական առաջնորդի հանդիսապետությամբ՝ նորաօծ աղոթատանը ուխտի պատարագ մատուցեց ենթաշրջանի հոգեւոր հովիվ Տ. Վրթանես քհն. Բաղալյանը, Ավետարանի եւ հաղորդության սկիհի Վերաբերումն արեց Ալավերդու հոգեւոր հովիվ Տ. Միքայել քհն. Շաղոյանը, իսկ բուրվառակիրն էր Ախթալա համայնքի հոգեւոր հովիվ Տ. Հեթում քհն. Թարվերդյանը: Օծման արարողությանը ներկա էին Լոռու մարզային իշխանության ներկայացուցիչներ, Վանաձորի, Ստեփանավանի, Թումանյանի քաղաքապետները, հարակից գյուղերի համայնքապետներ, ուխտավորներ Հայաստանի տարբեր վայրերից: Հավարտ պատարագի՝ թեմական առաջնորդն իր օրհնության ու շնորհավորանքի խոսքն ուղղեց ներկաներին, օրհնեց բարերարներ Արթուր Նալբանդյանին եւ Աշոտ Շաքարյանին, ապա օրհնության գիր ու սրբապատկերներ նվիրեց: Սրբազանն օրհնության եւ քաջալերանքի խոսքեր ասաց ուխտատեղիի վերականգնման նախագծի հեղինակ ճարտարապետ Սուրեն Աբովյանին, շինարար Հակոբ Հարությունյանին եւ նրա որդուն՝ Սուրենին, Տ. Վրթանես քհն. Բաղալյանին, Օձունի գյուղապետ Արսեն Տիտանյանին, Արտակ Ապրեսյանին եւ Համլետ Հակոբյանին: Սրբավայրի վերականգնման եւ վերաօծման առթիվ գործարար Արտուշ Փարեմուզյանի կողմից կանգնեցվեց խաչքար, որը նույնպես օծվեց: Արարողության ավարտին ներկաներին բաժանվեց ուխտի մատաղ: ➥ էջ 5

Նաբուքոդոնոսորն ու անհավանական թվացող մի պատմական փաստ

Մինչեւ ԺԹ դ. որոշ կասկածամիտների համար Նաբուքոդոնոսորն ընդամենը մի առասպելական կերպար էր: Սակայն Բաբելոնի ավերակները պեղելիս, ի զարմանս իրենց, գիտնականները պարզեցին, որ իրականում այդպիսի արքա գոյություն է ունեցել: Ավելին՝ նա ապրել է իսկն այն ժամանակ, որը Սուրբ Գիրքն անվանում է «բաբելոնյան գերության ժամանակաշրջան»:

«Այսօր Նաբուքոդոնոսորը Սուրբ Գրքի այն անձանցից է, որոնց մասին ոչ սուրբգրային աղբյուրներից մեծաքանակ տվյալներ ունենք»,– ասում է Էկկարտ Ֆրամը՝ Ելյան համալսարանի մերձավորարեւելյան լեզուների ու քաղաքակրթությունների պրոֆեսորը: Հնագետները հինբաբելոնյան կայսրության տարածքում տասնյակ հազարավոր կավե սալիկներ եւ գրություններ պարունակող այլ առարկաներ հայտնաբերեցին: Այդ նյութերի թիվն անդ պարզապես անթիվ-անհամար էր:

Համաձայն Դանիել մարգարեի գրքի՝ Աստված Նաբուքոդոնոսորին պատժեց նրա մեծ ամբարտավանության համար. «Մարդկանց միջից պիտի հալածեն ու վտարեն քեզ: Դու պիտի բնակվես անապատի գազանների հետ, եւ որպես արջառի՝ խոտով պիտի կերակրեն քեզ: Յոթը ժամանակներ պիտի անցնեն քո վրայից, մինչեւ ճանաչես, որ Բարձրյալն է տիրում մարդկանց թագավորությանը եւ այն պիտի տա, ում որ կամենա: Հենց նույն ժամին այդ բանը կատարվեց Նաբուքոդոսոնորի հետ. նա հալածվեց ու վտարվեց մարդկանց միջից, ինչպես արջառ՝ նա խոտ էր ուտում, եւ նրա մարմինը թրջվեց երկնքի ցողից, մինչեւ որ նրա մազերը երկարեցին առյուծի մազերի չափ, եւ նրա եղունգները՝ թռչունների մագիլների պես» (Ե 29–30): *Լիկանտրոպիա (հուն.՝ մարդագայլ) կոչվող այս տարօրինակ հոգեգարությունը, որի ժամանակ մարդ ոչ միայն կորցնում է բանականությունը, այլ նաեւ կենդանակերպ է դառնում, հայտնի է հին ժամանակներից: Այսպես՝ Հերոդոտոսը, հռոմեացի Հուլիանոս կայսեր արքունական բժշկապետ Օրիբազիոսը եւ այլք վկայում են գայլերի վերածված մարդկանց մասին: Քիչ չեն նմանօրինակ վկայությունները նաեւ եվրոպական, սկանդինավյան ու սլավոնական ավանդություններում եւ ասքերում: Այսպես էր նաեւ հայոց Տրդատ թագավորի պարագայում, ինչպես հայտնում է Ագաթանգեղոսը՝ Հայաստանում քրիստոնեության ընդունման եւ հաստատման ականատեսը. «Անմիջապես սկսեց մոլեգնել ու ինքն իրեն ուտել եւ բաբելացիների Նաբուքոդոնոսոր արքայի նման մարդկային բնությունից դուրս գալով՝ վայրենի խոզերի կերպարանքով, իբրեւ նրանցից մեկը, գնաց նրանց մեջ բնակվելու: Այնուհետեւ մտնելով եղեգնուտը՝ խոտաճարակ դարձավ....» («Պատմություն Հայոց», Երեւան, 1977, էջ 211, ծանոթ.՝ թարգմանչի):*

Ըստ Սուրբ Գրքի՝ լայնածավալ բաբելոնյան կայսրության արքա Նաբուքոդոնոսորը թափուր էր թողել իր գահը, վտարվել մարդկանցից եւ կենդանիների հետ ապրում էր ինչ-որ տեղ ու նրանց հետ սնվում: Ուշագրավն այն է, որ արքունական պատմության մեջ հաստատվում է Նաբուքոդոնոսորի՝ իր գահը յոթ տարի թափուր թողնելու փաստը, եւ չի բացատրվում, թե ինչու: Աստվածաշունչը, սակայն, պատճառաբանում է:

Ջոն Հոուլդինգեյ անունով գիտնականը որոշ զուգադրություններ է տեսնում Նաբուքոդոնոսորի խելագարության եւ նրա ապաքինման մասին տեղեկություններում: Նա գրում է. «Մեզ հասած կցկտուր սեպագիր բնագրում պարզորոշ խոսվում է Նաբուքոդոնոսորի ինչ-որ հոգեկան ցավագարության մասին եւ, հավանաբար, այն մասին, որ նա չէր իշխում Բաբելոնում ու լքել էր քաղաքը»:

«Բաբելոնյան Հոբ» հորջորջված վավերագիրը վկայակոչելով՝ Հոուլդինգեյն ասում է, որ սույն փաստաթուղթը «հաստատում է նրա պատժապարտությունն Աստծուց, հիվանդությունը, նվաստացումը, սարսափելի երազի մեկնության որոնումը, կտրված ծառի տապալման նման գահընկեց լինելը, մարդկանց միջից վտարումը, խոտաճարակությունը, բանականության կորուստը, արջառի (իմա՛ եզ) նմանվելը, Մարդուքից պատուհասված տեղատարափ անձրեւները, փչացած եղունգները, աճած եւ խռիվ մազածածկույթը, ինչպես եւ ապաքինումն ու այդ առիթով նրա գոհաբանությունն առ Աստված»:

«Այդ օրերից հետո ես՝ Նաբուքոդոնոսորս, իմ աչքերը բարձրացրի դեպի երկինք, իմ միտքը վերադարձավ ինձ, օրհնեցի Բարձրյալին, գովեցի եւ փառավորեցի հավիտենապես կենդանի Աստծուն, որովհետեւ Նրա իշխանությունը հավիտենական իշխանություն է.... Արդ, ես՝ Նաբուքոդոնոսորս, օրհնում եմ, փառավորում եւ առավել պանծացնում երկնքի արքային, որովհետեւ Նրա բոլոր գործերը ճշմարիտ են, Նրա ուղիները՝ արդար, եւ բոլորին, ովքեր կամբարտավանաան, Նա կարող է խոնարհեցնել» (Դան. Ե 31, 34):

Այսպես ուրեմն՝ Նաբուքոդոնոսորի խելագարությունը հաստատվում է պատմական վկայություններով:

Միջագետքի ավազուտները պեղելիս հնագետներն անսպասելիորեն հայտնաբերեցին Նաբուքոդոնոսորի եւ նրա կառավարման ուշ շրջանով թվագրվող մի սեպագիր արձանագրություն: Եվ ահա թե ինչ, զորօրինակ, պատմաբանները կարդացին այդ կավե սալիկներից մեկի վրա. «Իմ քաղաքամայրը.... սրտիս ուրախություն չէր պատճառում, իշխանություն չէի բանեցնում իմ բոլոր թագավորություններում, իմ թագավորության թանկարժեք գանձերը չէի հավաքում, Բաբելոնում ո՛չ ինձ համար, ո՛չ իմ թագավորության փառքի համար որեւէ շինություն չէի կառուցում: Ես [որեւէ անգամ] գովերգություն չվերառաքեցի ի փառս իմ տիրոջ եւ դիք Մարդուքի իմ սրտի ուրախություն Բաբելոնում՝ նրա մեծափառության քաղաքում եւ իմ թագավորության ոստանում, որեւէ բան չմատուցեցի նրա բագինի վրա, նաեւ չէի մաքրում ջրանցքները»:

Ի՜նչ անհավանական ցայտուն հակադրություն կա այն խոսքերի համեմատ, որոնցով նախկինում արքան գովաբանում էր իր թագավորությունն ու մեծությունը: ➥ էջ 7

Դարավոր պայքար

Սկիզբը՝ 2022-ի թիվ 16

Նշանավոր արաբ պատմիչ Իբն ալ Ասիրը (1160–1233 թթ.) իր բազմահատոր «Լիակատար պատմության» մեջ հանգամանորեն անդրադարձել է նաեւ սելջուկ-թուրքերի ասպատակություններին եւ զավթումներին Հայաստանում: Նա մասնավորապես նշել է, որ օղուզ-թուրքմեններն «անմիջապես անցան չարագործության, ապականության, սպանության եւ կողոպուտի.... անխնա կոտորեցին հասարակ ժողովրդին.... շատերն սպանվեցին....»: Այդպես վարվեց նաեւ Ալփ-Արսլանը, որի հրոսակները վառեցին ու կործանեցին եկեղեցիները, բնակիչներին վայրենաբար կոտորեցին: Նա հարձակվեց նաեւ Անիի վրա, որը «մի շեն ու բազմամարդ քաղաք էր, ուր կար հինգ հարյուրից ավելի եկեղեցի»: Ալփ-Արսլանը պաշարեց քաղաքը, որը Բյուզանդիան փաստորեն թողել էր անպաշտպան: Այդ իրավիճակից օգտվեցին սելջուկ-թուրքերը եւ մտնելով քաղաք՝ անխնա կոտորեցին բնակիչներին: Ի դեպ՝ տառացիորեն նույնն է վկայում արաբ մեկ այլ պատմիչ՝ Սադր ալ Դին ալ Հյուսայնին. «Եվ կոտորեցին անթիվ քանակությամբ բնակչություն, այնքան շատ, որ մահմեդականներից շատերը չկարողացան ներս խուժել քաղաք՝ սպանվածների բազմության պատճառով: Եվ նրանք գերի վերցրին գրեթե նույնքան, ինչքան որ սպանել էին»: Այնուհետեւ Ալփ-Արսլանը նույն ջարդարարությամբ գրավում է Արարատյան աշխարհը, Լոռին, Սյունիքը, Կարսը, նվաճված երկիրը ծածկում սպանվածների դիակներով: Թուրք պատմաբաններն արդյո՞ք գիտեն արաբական այս աղբյուրների մասին... Իհարկե, բայց նրանք գերադասում են անտեսել դրանք եւ կեղծելով փաստերը՝ փառաբանել Ալփ-Արսլանին եւ նմաններին:

Տուղրիլը հակահարված ստացավ նաեւ Մանազկերտում, որտեղ բնակչությունը՝ իշխան Վասիլի գլխավորությամբ, մեկ ամիս հերոսաբար դիմադրեց: Թշնամին հարկադրված նահանջեց, սակայն ճանապարհին ավերեց հայկական մի շարք քաղաքներ ու գյուղեր: Ժամանակակիցը վկայում է, որ ամենուր դիակներ, հրդեհված եւ ոչնչացված տներ ու եկեղեցիներ էին:

1056–1058 թթ. սելջուկները հարձակվեցին Կարսի եւ Անիի վրա: Չկարողանալով գրավել դրանք՝ վրեժ լուծեցին շրջակա քաղաքներից եւ գյուղերից, մասնավորապես Բասենի հովտում կործանեցին Օկոմի քաղաքը՝ կոտորելով 30 000 բնակչի: Անհաջողությամբ ավարտվեց սելջուկների հարձակումը Մելիտենի վրա, իսկ նահանջի ճանապարհին՝ Տարոնում՝ Ս. Կարապետ վանքի մոտ, սասունցիները՝ Թոռնիկ Մամիկոնյան իշխանի գլխավորությամբ, նրանց կանգնեցրին եւ կոտորեցին (մի մասն էլ ցրտահարվեց):

Այս իրադարձությունները տեղի էին ունենում Տուղրիլ բեկի օրոք (1038–1063 թթ.): Նա հզորացավ, մտավ Բաղդադ եւ խալիֆայից 1058 թ. ստացավ սուլթանի կոչում, դարձավ սելջուկյան աշխարհակալ պետության հիմնադիրը: Նրա հաջորդը՝ Ալփ-Արսլանը (1063–1072 թթ.) առավել ընդարձակեց սելջուկյան տիրապետությունը, որի ծանր լծի տակ ընկավ նաեւ Հայաստանը: Ալփ-Արսլանը 1064 թ. մեծաթիվ զորքով անցավ Աղվանքով եւ Վրաստանով ու մտավ Հայաստան:

Նա նախապատրաստվեց հետագա հարձակման Բյուզանդիայի դեմ՝ գրավելու դրա արեւելյան մարզերն ու Հարավային Հայաստանը: Բյուզանդիայի կայսր Ռոմանոս Դ Դիոգենեսը (1068–1071 թթ.) փորձեց դիմադրել եւ սկզբնական շրջանում ունեցավ որոշ հաջողություններ, սակայն ընդհանուր առմամբ վարձկաններից կազմված նրա խայտաբղետ բանակն ուժեղ չէր, եւ չկար կարգապահություն: Վարձկանների թվում էին պեչենգներ, ղփչաղներ եւ թուրքալեզու այլ զինվորներ, որոնք իրենց զորապետներով վճռական պահին դավաճանեցին: Հենց այդպիսի իրավիճակում 1071 թ. տեղի ունեցավ Մանազկերտի ճակատամարտը, որտեղ բյուզանդական բանակը կրեց խայտառակ պարտություն, կայսրն էլ գերի ընկավ Ալփ-Արսլանին: Սելջուկները գրավեցին Փոքր Ասիայի բազմաթիվ շրջաններ եւ իրենց իշխանությունը տարածեցին գրեթե ողջ Հայաստանի վրա: Հայտնի բյուզանդագետ պրոֆեսոր Հ. Գելցերը գրել է. «1071 թ. Մանազկերտի պարտության ճակատագրական սարսափելի օրը բյուզանդական մեծ պետության մահվան օրն էր: Թեեւ նրա հետեւանքներն իրենց բոլոր ահավորությամբ անմիջապես զգալի չեղան, սակայն Փոքր Ասիայի արեւելյան մասերը, Հայաստանը եւ Կապադովկիան, որոնք այնքան կայսրեր ու զորապետներ էին տվել եւ կազմում էին պետության իսկական ուժը, ընդմիշտ կորած էին կայսրության համար, եւ թափառական թուրքը հաստատեց հին հռոմեական փառահեղության ավերակների վրա իր վրանը»:

Հոռոմայրի Ս. Նշան վանք

↩ էջ 3

Հոռոմայրի Ս. Նշան եկեղեցում այսուհետ ամեն տարի՝ ուխտի օրերին, եկեղեցական խորհուրդներ եւ արարողություններ են կատարվում:

Որպես նշանավոր ուխտատեղի՝ Հոռոմայրի Ս. Նշան սրբավայրի ուխտի օրերն են Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ Սուրբ Խաչին նվիրված տոները (Երեւումն Սուրբ Խաչի, Խաչվերաց, Վարագա Սուրբ Խաչ) եւ հատկապես Գյուտ Խաչի տոնը (Խաչգյուտ):

Գյուտ Սուրբ Խաչի, Խաչգյուտի կամ Խաչի գտնվելու տոնը շարժական է, եւ Հայոց Եկեղեցին այն նշում է Խաչվերացին հաջորդող 7-րդ կիրակի կամ հոկտեմբերի 26-ի մերձակա կիրակի օրը: Հույներն այս տոնը միացրել են Խաչվերացի տոնին եւ նշում են սեպտեմբերի 14-ին, իսկ կաթոլիկները նշում են մայիսի 3-ին: Այս տոնի պատմական հիմքը սրբազան ավանդության միջոցով մեզ հասած մի գեղեցիկ պատմություն է: Քրիստոսի համբարձումից հետո Խաչափայտը մնացել էր Գողգոթայի բարձունքում ընկած՝ բոլորից լքված եւ անուշադրության մատնված: Գարնանը, երբ երեխաները խաղում էին խոտերի մեջ եւ ծաղիկներ հավաքում, ի ծնե կաղ մի երեխա, պատահաբար դիպչելով տերունական Խաչափայտին, բժշկվում է: Այս դեպքից հետո բազմաթիվ հիվանդներ ու կարոտյալներ սկսում են բժշկվել Սուրբ Խաչի զորությամբ: Հրեաները, ցանկանալով կանխել Խաչափայտի հրաշագործ զորության՝ հետզհետե տարածվող համբավը, այն դնում են Քրիստոսի գերեզմանում եւ մի վեմով փակում, իսկ վեմի վրա կանգնեցնում են Ափրոդիտեի պատկերը, որպեսզի Խաչից բխող հրաշքները վերագրվեն կուռքին: Այդ օրերին տերունական սրբազան վայրերին երկրպագելու համար իր զավակների հետ Հռոմից Երուսաղեմ է գալիս Կլավդիոս կայսեր կինը՝ Պատրոնիկե կայսրուհին, որը Պետրոս առաքյալի շնորհիվ դարձի էր եկել ու մկրտվել: Հակոբոս Տյառնեղբոր միջոցով տեղեկանալով Խաչափայտի մասին՝ նա հրամայում է բացել Տիրոջ գերեզմանն ու հանել Խաչը: Սակայն գերեզմանը բացելուց հետո նրանք մնում են անորոշության մեջ, քանի որ Տիրոջ Խաչափայտի հետ գերեզմանում էին գտնվում նաեւ երկու ավազակների խաչերը: Որպեսզի պարզեն, թե որն է Տիրոջ Խաչափայտը, նոր մահացած մի պատանու (տարբերակներից մեկում՝ նոր մահացածը աղջիկ էր՝ Պատրոնիկե կայսրուհու դուստրերից մեկը) են դնում խաչերից մեկի վրա եւ աղոթում, սակայն որեւէ բան տեղի չի ունենում: Դնում են երկրորդ խաչի վրա ու դարձյալ աղոթում. պատանին սկսում է կենդանության նշաններ ցույց տալ, եւ այսպիսով պարզվում է, որ դա աջակողմյան ավազակի խաչն է: Երրորդ խաչի վրա դնելիս նույնիսկ չեն հասցնում աղոթել, քանի որ Խաչափայտին հպվելուն պես պատանին հարություն է առնում: Այս հրաշքին ականատես հրեա Հուդան դարձի է գալիս, մկրտվում, իսկ հետո դառնում է Երուսաղեմի Կյուրեղ եպիսկոպոսը: Այսպիսով՝ ճանաչվում է Քրիստոսի հրաշագործ Խաչափայտը, որից մի մասունք վերցնելով՝ կայսրուհին վերադառնում է Հռոմ, իսկ Ս. Խաչը դրվում է տաճարում (հետագայում այդ մասունքից մի կտոր սուրբ Հռիփսիմեն բերում է Հայաստան, ապա թաքցնում Վարագա լեռան մի քարայրում՝ վախենալով, որ այն կընկնի հեթանոսների ձեռքը): Կլավդիոս կայսեր եւ Պատրոնիկեի մահվանից հետո հրեաներն սպանում են Հակոբոս Տյառնեղբորը, Ս. Խաչափայտը մյուս երկու խաչերի հետ նետում Գողգոթա եւ այդ վայրը մոռացության մատնելու համար՝ վերածում աղբանոցի: Շուրջ երեք հարյուր տարի Ս. Խաչը մնում է Գողգոթայում՝ թաղված աղբի ու մոռացության մեջ: Կոստանդիանոս Մեծ կայսեր մայրը՝ Հեղինե թագուհին, տեսիլքով հրահանգ է ստանում Աստծուց՝ գնալ Երուսաղեմ, գտնել Ս. Խաչը եւ տերունական վայրերում տաճարներ կառուցել: 327 թ. թագուհին մեծ շքախմբով գալիս է Երուսաղեմ եւ Հուդա անունով մի հրեայից տեղեկանում, որ Խաչափայտը թաղված է Գողգոթայի բարձունքում: Թագուհու հրամանով բլուրը մաքրում են եւ գտնում երեք խաչերը՝ պատված անուշաբույր ռեհանով, որով նրանք պաշտպանվել էին աղբից ու զերծ էին մնացել ապականությունից, հողից ու փտումից: Տերունական Խաչափայտն անմիջապես ճանաչվում է, քանի որ նրան հպվելով՝ նախ բժշկվում է մի կին, ապա հարություն է առնում մի պատանի՝ Երուսաղեմի Մակարիոս պատրիարքի որդին:

Գողգոթայի վրա կառուցվում է Ս. Հարության տաճարը, իսկ Խաչափայտը բարձրացվում է այնտեղ՝ ի ցույց բոլորի եւ ի նշանավորումն այն իրողության, որ երեքհարյուրամյա անհայտությունից հետո վերջապես գտնվել ու քրիստոնյա աշխարհին է վերադարձվել իր մեծագույն սրբություններից մեկը: Ահա այս սրբազան իրողության հիշատակն է, որ ամեն տարի մեծ շուքով տոնակատարում է մեր քրիստոնեական Եկեղեցին: Եվ այս տոնը պատգամ է յուրաքանչյուր քրիստոնյայի՝ իր հոգում գտնելու բազում մեղքերի տակ թաղված Խաչը, ապավինելու նրա զորությանը եւ քայլելով Խաչյալի ճանապարհով՝ արժանի դառնալու երկնային արքայության պսակին:

Հատկանշական է, որ տեղացի տարեցներից ոմանք հիշում էին, որ նույնիսկ խորհրդային իշխանության տարիներին ձորամիջի Սուրբ Նշան եկեղեցին շարունակում էր մնալ որպես նշանավոր ուխտատեղի եւ Գյուտ Սուրբ Խաչի տոնի օրը ուխտավորների հոծ խմբեր էին գալիս ու բարձրանում Հոռոմայրի Սուրբ Նշան:

* * *

Վանական համալիրի Հոռոմայր անվանման ստուգաբանության մի քանի տարբերակներ են մեզ հասել: Այդ ավանդապատումներից մեկի համաձայն՝ Բյուզանդիայի Լեւոն Իսավրացի կայսրը Վասիդ անունով մի հոռոմ (այսինքն՝ բյուզանդացի) իշխանի ուղարկում է Հայաստան, որն էլ կայսեր անունից մեղադրում եւ անարգում է Հայոց Եկեղեցուն: Իր հայհոյախոսության համար Վասիդը պատժվում, հիվանդանում եւ հասնում է մահամերձ վիճակի: Բժիշկները չեն կարողանում օգնել նրան: Գթառատ մարդիկ խորհուրդ են տալիս դիմելու Ս. Հովհան Օձնեցու (717–728 թթ.) օգնությանը: Միայն Ս. Հովհան Օձնեցու ձեռքի թեթեւ հպումով Վասիդն առողջանում է եւ հավատում Հայոց Եկեղեցու ուղղափառությանը, մնում Հայաստանում եւ ճգնում մի քարայրում, որը նրա մահից հետո կոչվում է Հոռոմի այր կամ Հոռոմայր:



Ս. Հովհան Օձնեցին մի առիթով այցելության է գալիս Վասիդին եւ տեսնելով, որ նա ջրի պակասություն է զգում, խաչակնքում է, եւ մոտակա այրերից մեկի մեջ իսկույն թնդյուն-թնդոցով հորդառատ աղբյուր է բխում: Անուշահամ ու սառնորակ աղբյուրը եւ քարանձավը ստանում են Թնդոց անունը: Սուրբ Նշան եկեղեցու ներքեւի ձորն էլ, ուր բխում է անուշահամ, հորդառատ Թնդոց աղբյուրը, այդուհետ կոչվում է Թնդոցի ձոր:

Թնդոց աղբյուրը հայտնի էր որպես անզավակներին երեխա պարգեւող սրբատեղի: Սուրբ Նշան ուխտի գալով՝ կանայք խնդրում էին սրբերի բարեխոսությունն ու օգնությունը: Մոմ վառելուց, խունկ ծխելուց, ջերմեռանդորեն աղոթելուց, մատաղ անելուց հետո անզավակ կանայք իրենց գոտին դնում էին ուխտավայրի բեմի վրա ու ժամասացությունից կամ պատարագից հետո խնդրում շատ որդիների հայր մի տղամարդու, որ գոտին վերցնի ու կապի իրենց մեջքին, կամ էլ՝ երեք անգամ անցնում էին Թնդոց աղբյուրի միջով: Փոքրիկ երեխաներին էլ «ոտ ելնելու»՝ քայլելու համար երեք անգամ անցկացնում էին Թնդոց աղբյուրի միջով:

Արման ՄԱԼՈՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

Ալփ-Արսլանի հաջորդի՝ Մելիքշահի օրոք (1072–1092 թթ.) սելջուկյան տերությունն առավել հզորացավ. այն լայնածավալ էր՝ Չինաստանի սահմաններից մինչեւ Միջերկրական ծով, Կովկասից մինչեւ Հնդկական օվկիանոս: Մայրաքաղաքն Սպահանն էր: Սելջուկյան տերությունը բաժանված էր էլայեթների՝ նահանգների, որոնք գլխավորում էին ամիդները՝ փոխարքաները, մելիքներն ու ամիրաները: Հայաստանը, Ատրպատականն ու Առանը (Աղվանքը) մտնում էին մի էլայեթի մեջ: Մելիքշահի մահից հետո սելջուկյան աշխարհակալ տերությունը քայքայվեց, եւ Հայաստանի տարածքում կազմվեցին մի շարք ամիրայություններ (Անիի, Դվինի, Կարսի, Խլաթի, Կարինի եւ այլն), որոնք փաստորեն անկախ էին եւ միայն ձեւականորեն էին ենթարկվում սելջուկյան սուլթանությանը: Հայաստանում գոյություն ունեցող հայկական փոքր իշխանությունները հետզհետե քայքայվեցին եւ վերացան: Երկրի հարթավայրային շրջաններում տիրապետող դարձան սելջուկ-թուրքերը, իսկ հայ բնակչությունը քշվեց լեռնային շրջաններ կամ հեռացավ երկրից: Ավերվեցին բազմաթիվ քաղաքներ ու գյուղեր:

Մեծ հարված հասցվեց Հայաստանի ոչ միայն տնտեսությանը, այլ նաեւ նրա դարավոր մշակույթին, ոչնչացվեցին նյութական ու հոգեւոր աժեքներ: Այդպես եղավ նաեւ Սյունիքում 1170 թ., երբ սելջուկ աթաբեկ էլտկուզի հրոսակները, գրավելով ամրակուռ Բաղաբերդը, ոչ միայն կազմակերպեցին բնակչության «սաստիկ կոտորած», այլ նաեւ ոչնչացրին ու կողոպտեցին հայերի՝ ապահովության համար այստեղ հավաքած առավել քան 10000 գիրք եւ շատ գանձեր: Այդ մասին անվանի պատմագիր Ստեփանոս Օրբելյանն իր «Պատմութիւն նահանգին Սիսական» վավերագրական աշխատության մեջ հոգեկան ծանր խռովքով գրել է. «Բոլոր վանքերից այնտեղ էին կուտակվել սրբությունները, գրքերը, եկեղեցական սպասքները, առավելապես՝ Տաթեւի հարուստ ու փարթամ աթոռի անհամար ու աննման սրբություններն ու եկեղեցական սպասքները, ոսկե եւ արծաթե խաչերը, հիշատակային իրերը՝ զարդարված անգին ակնեղեններով, անհամար մարգարիտներով: Այնտեղ ամբարված էին շատ կտակարաններ՝ թվով ավելի քան 10000: Դրանք բոլորն էլ գերի տարվեցին եւ ցիրուցան եղան երկրի երեսին»:

Հիրավի օտար զավթիչների հանցանքով հայ գրչությունն ու դպրությունը շատ կորուստներ են ունեցել, բայց այս մեկը զանգվածային կորուստ էր, որին գերազանցեցին 1915 թվականի ոճրագործությունները... Եվ այս ամենը վայրագ թուրքերի ձեռքով... Ընդ որում՝ նրանք նկատել էին, որ հայոց գրքերը մեծ արժեք ունեն, ուստի հաճախ նաեւ գերեվարում եւ վաճառում էին դրանք հենց իրենց՝ հայերին, որոնք նույնիսկ նյութական նեղության մեջ գտնվելով՝ գնում եւ փրկում էին հարազատ հոգեւոր մասունքները:

Սելջուկ-թուրքերի տիրապետության շրջանում խստորեն ծանրացավ Հայաստանի քաղաքական ու տնտեսական վիճակը: Հայ ժողովուրդն իրավազուրկ էր՝ բոլորովին ենթակա սելջուկ նվաճողներին: ➥ էջ 8

Հայությանն ու հայագիտությանը նվիրաբերված կյանք...

Ն. Աղբալյանի ծննդյան 150-ամյակի առթիվ

Սկիզբը՝ թիվ 12



1917-ը նոր սրբագրումներ մտցրեց հայ ազգային ճակատագրի կեռմաններում: Ռուսական զույգ հեղափոխությունների հետեւանքով Կովկասն անջատվեց Ռուսաստանից, իսկ կռվող ռուսական բանակը, որը հասել էր արդեն Արեւմտյան Հայաստանի հեռու խորքերը, տարերային ու համատարած կերպով լքեց ռազմաճակատը եւ հետ քաշվեց իր հայրենի երկիրը:

1918 թ. սկզբին ռուս-թուրքական պատերազմը վերածվեց հայ-թուրքականի: Ամեն ինչ ավելի բարդացավ եւ տագնապալի դարձավ:

Իրադարձությունների հենց այդպիսի հորձանուտում էր ազգային կյանքը, երբ 1917 թ. սեպտեմբերի վերջին հրավիրվում է հայկական ազգային համախորհրդակցությունը (համագումարը), որի աշխատանքներին մասնակցում էր 228 պատգամավոր, որոնք ներկայացնում էին ՀՅԴ, Սոցիալ-դեմոկրատ հնչակյան, Հայ ժողովրդական, Սոցիալիստ-հեղափոխականների կուսակցությունները, ինչպես նաեւ հասարակական, կրթական ու մշակութային տարբեր կազմակերպություններ եւ հոսանքներ: Համագումարում մեծամասնություն էին կազմում ՀՅԴ անդամներն ու համակիրները:

Ն. Աղբալյանն իր կուսակցության կողմից էր ընտրվել պատգամավոր եւ համագումարում մի քանի անգամ սուր ու կրքոտ ելույթներ է ունենում: 1917 թ. հոկտեմբերի 2-ին՝ չորրորդ նիստի ժամանակ, «Անդրկովկասի հատուկ կոմիտե» հարցի շուրջ որպես զեկուցող հանդես է գալիս Ն. Աղբալյանը: Քննադատության սլաքն ուղղված էր Հատուկ կոմիտեի (Օզակոմ) հայագգի ներկայացուցիչ Մ. Պապաջանյանին: Միաժամանակ հռետորը նշում էր հայ քաղաքական իրականության մեջ թերությունները՝ կուսակցությունների հակադիր ու երկփեղկված քաղաքականությունը, հայ տարրի ինքնագիտակցության պակասը, դարեդար պետականություն չունենալու եւ դրանով իսկ պետական գործեր վարելու փորձի ու փորձառության իսպառ բացակայությունը:

Համագումարն ընտրում է տասնհինգ անդամից բաղկացած գործադիր մարմին՝ Արեւելահայ ազգային խորհուրդը, որի նախագահ է ընտրվում ՀՅԴ անվանի գործիչ Ավետիս Ահարոնյանը: Այս մարմինը, փաստորեն, դառնում է Անդրկովկասի հայության լիազոր ներկայացուցչությունը՝ օժտված կառավարության իրավունքներով: Ն. Աղբալյանը եւս ընտրվում է խորհրդի կազմում:

Եկավ 1918 թ. գարունը: Մայիսյան հերոսամարտերում հայ ժողովուրդը դիմակայեց ու ջախջախեց թուրքական կանոնավոր ու անկանոն ուժերին եւ հրոսակախմբերին: Մայիսի 28-ին հռչակվեց Հայաստանի Հանրապետության անկախությունը: Հայ քաղաքական ուժերի առաջատարը՝ ՀՅԴ-ն, ստանձնեց հայոց հինավուրց պետականության վերականգման պատասխանատվությունը:

Ն. Աղբալյանը հայ պետականության վերականգման այս ժամանակաշրջանում (1918—1920 թթ.) հարազատ կուսակցության թելադրանքով եւ հանձնարարականներով կատարեց բոլոր այն գործառույթները, որոնք միայն իրեն էին վերապահված: Դրանք մեծ ու փոքր ծավալի հանձնարարականներ էին, որոնք կարեւոր էին համարել կուսակցական ընկերներն ու վերադասը:

Անկախության հռչակումից հետո Թիֆլիսի եւ Երեւանի Հայոց ազգային խորհուրդների բազմաթիվ խորհրդակցությունների եւ միջկուսակցական բանակցությունների շնորհիվ ձեւավորվեց երկրի ժամանակավոր բարձրագույն օրենսդիր մարմինը՝ Հայաստանի խորհուրդը, որը բաղկացած էր 46 անդամից: Ն. Աղբալյանը խորհրդի կազմում էր եւ ընդգրկված էր ինքնավարության, նյութական եւ խմբագրական հանձնաժողովներում՝ կատարելով մեծ ծավալի օրինաստեղծ բնույթի աշխատանք: Իր խառնվածքի թելադրանքով՝ նա գործուն մասնակցում էր հանրապետության առջեւ ծառացած բազմաթիվ եւ բազմապիսի հիմնահարցերի քննարկմանը: Բայց հատկապես այդ բարդ ու խառնակ օրերին զբաղվում էր Հայաստանին հարեւան երկրների հանդեպ խելացի ու համբերատար քաղաքական ուղեգծի մշակմամբ: Հայորդի ազնվագույն գործիչը վաղուց էր նկատել, որ հարեւան վրացիներն ու ազերիները ձգտում են ամբողջովին յուրացնել հայապատկան եւ հայաբնակ տարածքները, եւ նրանց զավթողական մոլուցքը որեւէ չափ ու սահման չէր ճանաչում: Ազգերի եւ ազգությունների ինքնորոշման սկզբունք ու խաղաղ համակեցության որեւէ կանոն չկային նրանց օրակարգում: Եթե հայ-թուրքական (թաթարական) բախումները սովորական երեւույթ էին այդ ժամանակ էլ, ապա հայ-վրացական բախումը նորություն էր: Ի վերջո վրացիների հարձակողականությունը հանգեցրեց հայ-վրացական պատերազմին: 1918 թ. դեկտեմբերի 13-ին սկսվեց այդ պատերազմը եւ ավարտվեց դեկտեմբերի 31-ին:

Հետաքրքիր են Ն. Աղբալյանի՝ ազգային-պետական գործչի դիտարկումները սույն խնդրի առնչությամբ: Ըստ նրա՝ «Վրաց կառավարությունը, չեմ ուզում ասած լինել ժողովուրդը, ստեղծում է մեզ համար անախորժություններ հանիրավի»: Այո՛, վրացիները ձգտում էին նվաճել ոչ միայն Ախալցխան ու Ախալքալաքը, այլեւ Լոռին ու հարակից շրջանները: Նշենք, որ այդ ժամանակ Լոռու գավառում բնակվում էր շուրջ 60 հազար հայ: Առաջնորդվելով ազգերի ինքնորոշման սկզբունքով՝ Ն. Աղբալյանը հետեւյալն է հարցադրում. «Այդ հողամասում (Լոռիում՝ *Ա. Կ.*) ապրում է մի ժողովուրդ, որին պիտի հարցնել, թե նա ում է ուզում, ում հետ է ուզում լինել: Նա արտահայտել է իր կամքը պարզ ու որոշ՝ իրեն համարում է մերը եւ միանալ է ուզում մեզ հետ» (Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 198, g. 1, վգ. 15, թ. 39):

Անշուշտ դա այդպես էր եւ հենց այդ կերպ էլ եղավ: Բարեբախտություն էր, որ այդ եղբայրասպան պատերազմը կարճ ընթացք ունեցավ՝ ընդամենը երկու շաբաթ: Նորաստեղծ հանրապետությունը հետզհետե կարողացավ կազմակերպված, կենսակայուն ու ճանաչված պետության վերածվել:

Հայաստանի խորհրդի 1919 թ. մայիսի 28-ի հանդիսավոր նիստում ազդարարվեց միացյալ եւ անկախ Հայաստանի հռչակագիրը, որը հայ ժողովրդի դարավոր իղձերի արտահայտությունն էր: Նույն թվականի հունիսին տեղի ունեցան Հայաստանի խորհրդարանի ընտրությունները: Նորընտիր խորհրդարանի բացումը 1919 թ. օգոստոսի 1-ին էր: Այն հաստատեց ՀՀ կառավարության նոր կազմը՝ Ալ. Խատիսյանի գլխավորությամբ: Քաղաքական ու պետական մտածողությամբ ընդգրկուն ազգային գործիչը՝ Ն. Աղբալյանը, նշանակվեց հանրային կրթության եւ արվեստի նախարար:

Սկսվում է նրա կյանքի ու գործունեության մի նոր՝ առավել պատասխանատու եւ հագեցած փուլը:

Հարկավոր էր զրոյից ստեղծել, ձեւավորել, գործնական ընթացքի մեջ դնել այնքան շատ բան այս ոլորտում: Անհրաժեշտ էր ազգային շունչ, դեմք ու դիմագիծ հաղորդել կրթական ողջ համակարգին, մշակութային կյանքին:

Ն. Աղբալյանը զինակիցների ու համախոհների հետ ողջ եռանդով լծվեց նվիրական գործին: Երկար ու ձիգ հարյուրամյակներից հետո հայրենական հողի վրա պետք է բացվեին կամ նոր վերածնունդ ապրեին տարրական ու միջնակարգ կրթօջախներ, երաժշտական ու թատերական խմբեր, մատենադարան, ազգային ու ազգագրական թանգարաններ, հանրային գրադարաններ եւ այլ հաստատություններ: Նախեւառաջ հարկավոր էր ազգայնացնել ու հայացնել երկիրը: Հայերենը ոչ միայն հռչակվեց պետական լեզու, այլեւ հայերենի կատարյալ տիրապետումը դարձավ պետականորեն պարտադրվող անհրաժեշտություն: Նախարարն ինքը մշակեց հանրապետության պաշտոնեության համար «հայոց լեզվի դասընթացների» ծրագիրը: Դասընթացները գործում էին Երեւանում եւ Ալեքսանդրապոլում:

Ամենամեծ ուշադրությունը սեւեռված եւ ամենամեծ հոգսն ընկած էին դպրոցների վրա, որոնք գտնվում էին քայքայված ու խաթարված վիճակում: Նախարար Ն. Աղբալյանն օրինիբուն զբաղված էր դպրոցների վերանորոգման եւ նոր կրթօջախների հիմնադրման հարցերով. ընդ որում՝ ոչ միայն Հայաստանում:

Անհրաժեշտ էր լուծել նաեւ Վրաստանում եւ Ադրբեջանում գտնվող հայկական դպրոցների գոյատեւման խնդիրը, քանզի անկախանալուց հետո այդ հանրապետություններում հայկական դպրոցները զրկված էին պետական որեւէ աջակցությունից: Ն. Աղբալյան նախարարին մեծապես զբաղեցնում էին նաեւ գրականության եւ գրական գործի կազմակերպման հարցերը:

Ինքը ժամանակին մասնակցել էր Հովհ. Թումանյանի գլխավորած «Վերնատան» աշխատանքներին: Այժմ Երեւանում հիմնում է Հայաստանի գրական ընկերությունը, որի աշխատանքներին եւս գործուն դերակատարություն է ունենում: Հենց այս ընկերության հանդիսավոր նիստի ժամանակ գրականագետ ու գրաքննադատ նախարարը, ի լուր համայն հայ աշխարհի, հայտնում է մի նոր մեծ բանաստեղծի՝ Եղիշե Չարենցի հայտնության մասին. «Այդ օրն ամբողջ Երեւանն իմացավ, որ մեծ բանաստեղծ է ծնվել»:

Նախարարի կյանքում ամենահիշարժան իրադարձությունը եղավ 1920 թ. հունվարի 31-ին, երբ հանդիսավոր պայմաններում բացվեց Հայաստանի համալսարանը: Միջնադարում բարձրակարգ կրթօջախներ հիմնած հայ ժողովուրդն Ի դարում պիտի ունենար իր համալսարանը եւ ունեցավ:

Բազմաթիվ մտահղացումներ եւ արդեն մշակված ծրագրեր կային, որոնք այդպես էլ մնացին թղթի վրա՝ չիրագործված:

Պատճառը երկրում ներքաղաքական լարված վիճակն էր, որն արհեստականորեն սրում էին քեմալական Թուրքիան եւ բոլշեւիկյան Ռուսաստանը: 1920 թ. գարնանը բռնկվեց մայիսյան ապստամբությունը: Նախարարության բնականոն գործունեության ընթացքը խաթարվեց, իսկ Ն. Աղբալյանը մեկնեց Կարս: Նրա հռետորական բացառիկ հանճարի եւ կազմակերպչական ձիրքի շնորհիվ Կարսում արյունահեղություն չեղավ մայիսյան այդ օրերին: Մի քանի ամիս անց Հայաստանն արդեն պիտի դառնար խորհրդային, եւ երկրում սկսվեին քաղաքական հետապնդումները:

1921 թ. գարնանը, երբ պարզ էր փետրվարյան ապստամբության վախճանը, Ն. Աղբալյանը, Լ. Շանթը եւ այլ զինակից ընկերներ ստիպված էին թողնել հայրենի երկրի սահմանները: Բոլշեւիկյան բռնապետությունը երկարատեւ էր լինելու եւ մանավանդ անողոք՝ հակառակորդների նկատմամբ:

Երբեմնի նախարարը դարձավ քաղաքական վտարանդի, սկզբում անցավ Թեհրան, հետո՝ Եգիպտոս (Ալեքսանդրիա), ապա վերջնականորեն հանգրվանեց Բեյրութում:

Մեծ ու անգնահատելի է նրա գործունեության կարեւորությունը Սփյուռքում նոր սերունդների հայեցի կրթության եւ դաստիարակության տեսանկյունից: Այնտեղ եւս շարունակեց մանկավարժական ու հայագիտական գործունեությունը, գրեց արժեքավոր նորանոր հոդվածներ եւ ուսումնասիրություններ, հրապարակեց գրքեր:

Եվ միշտ հայացքը հառած պահեց երկրի՝ Հայաստանի վրա: Միշտ երազեց տուն դառնալու մասին եւ այդ ոգով խանդավառեց դրսում ապրող հայերին: Եվ մշտապես դառն ապրումներ ունեցավ Արեւմտյան Հայաստանի կորստի համար:

Պատմություն կերտած եւ պատմության էջերում իր մնայուն տեղը վաստակած հայորդին վախճանվեց 1947 թ. Բեյրութում:

Նրա ոգին այժմ ազատորեն սավառնում է հայրենի երկրի լեռների կատարներին, որի անկախ ու ազատ գալիքը կերտելուն նվիրեց իր կյանքն ամբողջությամբ եւ անմնացորդ:

Արմեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

Մեր վարդագույն բարեկամը

Սկիզբը՝ թիվ 13

Որտեղի՞ց են մեր երկիր գալիս սարյակները:

Վ. Անանյանը որոշ վերապահումով նշում է Միջագետքը եւ Արաբական թերակղզին: Այստեղ անհրաժեշտ է հավելել նաեւ Հնդկաստանը, քանի որ 1970-ականի կեսերին Հայաստանի լրատվամիջոցներով հրապարակվեց «Վարդագույն սարյակի ճակատագիրը» լուրը, որի «հերոսը» Արտաշատում խփված օղակավորված սարյակն էր: Օղակի նշագրման վերծանումից պարզվեց, որ այն գիտական նպատակով արվել է Հնդկաստանում՝ որոշելու համար թռչնի միգրացիան՝ տեղաշարժերը, աշխարհագրական վայրերը:

Արագածի հարավային լանջերից Արարատյան դաշտով, Վայոց ձորով, Սյունիքով մինչեւ Նախիջեւան եւ Մեղրի՝ գրեթե ամենուր կարելի է հանդիպել վարդագույն սարյակի: Նկատված է, որ դրանք մեզ մոտ բնակվում են գաղութներով՝ ապրիլի վերջերից մինչեւ օգոստոսի սկիզբը: Կերապակաս տարիներին առավել երկար են մնում. այնքան, քանի դեռ չեն լրացրել հետդարձին անհրաժեշտ «վառելանյութը»՝ ճարպի պաշարը:

Սարյակների ձվադրավայրերից ամենախոշորը տեսել եմ Արա լեռան ոտքում, Աշտարակի տարածաշրջանի Արտաշավան, Ուշի, Ուջան, Կոշ, Արուճ գյուղերի շրջակայքի լեռնատափաստանային գոտում, իսկ առանձին տարիների՝ Էջմիածնի Փարաքար, Մերձավան, Այգեկ, Բաղրամյան, Աշտարակի Սասունիկ բնակավայրերի միջեւ ընկած տափարակում: Այստեղ մորեխի զգալի կուտակումներ են լինում, իսկ որտեղ մորեխ, այնտեղ էլ սարյակը: Մելիորացված, օգտագործելի դարձրած այս տափաստանում՝ հուռթի այգիների կողքին, տեղ-տեղ հսկայական քարաբլրակներ են առաջացել, որտեղ եւ ձվադրում, ճուտ են հանում սարյակները: Զագ են ունենում կերի «շտեմարանին» մոտ (ինչպես մարդիկ գործարանը կառուցում են հումքի բազային մոտ): Թռչունները ոչ մեծ խմբերով իջնում են խաղողի այգիները, եռանդուն ջարդում մորեխը եւ այնքան տարվում սիրած գործով, որ թվում է՝ երբեմն են միայն հիշում ծնողական իրենց պարտականությունների մասին: Երամից առանձինները զատվում եւ կտուցներին մորեխ առած՝ ուղղվում են դեպի քարակույտերի մեջ գտնվող պարզ, բացօթյա բները: Այս նույն պահին էլ շրջակա գյուղերի տնամերձ այգիներից մեկ-երկու

թուք «թռցրած»՝ գալիս են ուրիշ սարյակներ (հնարավոր է՝ դրանք ծնող զույգերի մյուս մասն են): Ակնբախ է, որ կերակրող ծնողները ճշտորեն պահում են ճտերին տրվող կենդանական (մորեխ) եւ բուսական (թուք) սննդի հերթագայությունը: Եվ քանի որ երկու ծնողներն էլ թուխս են նստում (ի տարբերություն շատ այլ թռչունների), երկուսն էլ ջանադրաբար կերակրում, մեծացնում են իրենց սիրասուն ձագուկներին:

Կենդանաբանները նկատել են, որ ձագերին մեծացնելու շրջանում մեկ սարյակն օրական ուտում է ավելի քան 300 գրամ մորեխ ու միջատ, որը 4–5 անգամ գերազանցում է թռչնի սեփական քաշը:

Ճտերին կերակրելու շրջանում, նկատել եմ, սարյակներն անծպտուն (ասել է թե՝ առանց երգ ու ծլվլոցի) եւ գողունի մտնում են տնամերձ այգիները, եւ եթե անվտանգ է տեղը, ամեն օր նույն թռչունները, վաղ առավոտից մինչեւ մթնշաղ, մեկիկ-մեկիկ պոկոտում, իսկ երբեմն էլ գետնի վրայից հավաքում են կիսաչոր քաղցր պտուղները եւ նույն «երթուղով» ածապարում «տուն»: Նրանք այնպես են մաքրազարդում թթենու ծառերը, որ շատերին թվում է, թե պտուղների հասունացումը 3–4 օրով հետ է ընկել:

Հուլիսի առաջին օրերին օդը միանգամից լցվում է նորափետուր, փոքր ինչ սեւին տվող դեղնակտուց ճտերի զիլ ու կայտառ ձայներով (ի դեպ՝ մինչեւ մեր երկրից չվելը՝ ճուտիկները դեռ ոչ մի վարդագույն փետուր չեն ունենում): Ծնողները մեծագույն հոգածությամբ են թեւեր առած իրենց ձագուկներին վարժական թռիչքների հանում, դրանց իջեցնում ծառերին եւ ուսուցանում թուք պոկելու «կանոնները»: Հրացանավորի, այգետիրոջը կամ կասկածելի շարժումներով այլ մարդու նկատելիս՝ աչալուրջ ծնողները տագնապի ճիչ-ազդանշան են արձակում, եւ երամն աղմուկով օդ է բարձրանում: Գրեթե ամբողջ հուլիսին տարմահավերը համերգում են, ամբողջ ձայնով ճռվողում, անհոգ կեցության խնդությունը ներբողում անվերջ: Սակայն բերկրանքի այդ վեհ պահին երգը բիրտորեն ընդհատում է որսագողի հրացանի որոտը: Երամը... զոհեր տալով... թռչում է այլ վայր:

Թռչուններին փախցնելու, հեռացնելու համար հաճախ կրակում են հենց այգետերերը: Հայ մեծ վիպասան Ռաֆֆին Պարսկաստանում ականատես է եղել այգեպանների եւ նրանց ածեցրած պտուղները խժռող աներես սարյակների «հակամարտությանը»: Իր դիտարկումները բավականին խիստ է արտահայտել պրոֆ. Պարրոտը. «Թութը հասնելիս [սարյակները] գալիս են անհամար քանակությամբ եւ ջարդում փչացնում են պտուղները՝ անչափ վնաս բերելով երկրին»:

Այո՛, սարյակների արշավն այգիների վրա անառարկելի իրողություն է, ուստի եւ մեր բարեկամ վարդագույն կողոպտիչի նկատմամբ առկա է երկակի վերաբերմունք. առաջինը՝ պաշտամունքի հասնելու չափ մեծարանքն է՝ իբրեւ մորեխասպանի եւ փրկարարի, երկրորդը՝ իբրեւ մարդու աշխատանքի պտուղները կողոպտողի աստիճանի իջած...

Սակայն երկրորդի համար պատասխանատու ենք մենք, որ արմատախիլ արեցինք թթենիները: Մարդու սխալ, չկշռադատված միջամտությունը բնությանը միշտ էլ կարող է խախտել դարերով, հազարամյակներով արմատացած բնական ներդաշնակությունը:

Ինչեւէ, արդեն քանիցս համոզվեցինք, որ իբրեւ բնական-կենսաբանական պայքարի միջոց՝ մարդկանց ահավոր վնաս բերող մորեխը ոչնչացնելու գործում անգնահատելի, պարզապես անփոխարինելի է վարդագույն սարյակը, որի համար կարելի է եւ մեծահոգաբար ներել նրա... «ավազակությունները»: Թող նրանք էլ ազատորեն օգտվեն Աստծու առատ սեղանից...

Իսկ ինչպե՞ս գործնականում փրկենք մեր վարդագույն բարեկամներին: Ահավասիկ գործնական, շահավետ եւ հեռանկարային առաջարկություն. կարծում եմ՝ մեզանում, անշուշտ, կլինեն բնությունը, կենդանական աշխարհը սիրող, նաեւ իրենց շահը լավ գիտակցող գործարարներ, որոնց սեփական գումարով կամ թռչունների, կենդանիների եւ ընդհանրապես բնապահպանության հարցերով զբաղվող միջազգային կազմակերպությունների դրամական օժանդակությամբ հնարավոր կլինի Հայաստանի Հանրապետությունում նոր, ընդարձակ թթաստաններ հիմնել:

Դա շատ կարեւոր գործ կլինի, որով հիանալիորեն կարելի է ամենաուղղակի իմաստով զուգակցել օգտակարն ու շահավետը: Թթաստանները հնարավորություն կտան վերստին ունենալու թանկարժեք բնական մետաքսի արտադրություն, ստանալու բուժական հատկություններ ունեցող թթի օղի եւ, իհարկե, անմահական դեղամիջոց թթի դոշաբ ու չամիչ, բնափայտ եւ այլն: Եվ այս ամեն օգտակարի հետ նաեւ ամենագլխավորը՝ վարդագույն սարյակների համար կերի հուսալի պաշար ստեղծել, հետեւապես դրանով մեծապես նպաստել այդ թռչնատեսակի գոյատեւմանը, վերականգնել օգտակար, մարդու բարեկամ թռչնի երբեմնի առատությունը եւ բնությունը, մանավանդ գյուղատնտեսությունը զերծ պահել չարաղետ մորեխի ավերածություններից:

Թթենին կենսունակ ծառատեսակ է, ուստի նոր թթաստանների հիմնումով կարելի է աչք շոյող կանաչով ծածկել Արարատյան հովտի շրջակա (եւ ոչ միայն) գորշ ու լերկ լեռնալանջերը՝ ստանալով նաեւ հրաշալի այլ օգուտներ:

Որպես վերջաբան՝ հիշատակենք Հարպեր Լիի «Սարեակ մի՛ սպանաներ» գրքի խոսուն վերնագիրն իբրեւ հորդոր:

Այո՛, ո՛վ մարդ, սարյակ մի սպանիր:

Սերժ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Նաբուքոդոնոսորն ու անհավանական թվացող մի պատմական փաստ



↩ *էջ 4*

Թագավոր-շինարարը, որը Բաբելոնը դարձրել էր աշխարհի ամենագեղեցիկ քաղաքը, ոչ միայն նոր շինություններ չէր խոյացնում, այլ նաեւ պատշաճ կերպով արդեն իսկ կառուցածների պահպանության հոգը չէր տանում:

Արդ, ի՞նչ տեղի ունեցավ այդժամ Բաբելոնի հետ, իսկ գլխավորը՝ ինչո՞ւ Նաբուքոդոնոսորն այլեւս զոհեր չէր մատուցում ու չէր աղոթում գերագույն դիք Մարդուքին: Այս փաստը պարզապես ցնցեց այդ բնագիրը վերծանող գիտնականներին: Չէ՞ որ այդ, ինչպես եւ ուշ ժամանակներում հեթանոսական կուռքերի պաշտամունքը պարտադիր էր Բաբելոնի թագավորության յուրաքանչյուր բնակչի համար, այդ թվում նաեւ՝ թագավորի: Ամեն ոք, ով պատշաճ կերպով չէր մեծարում կուռքերին, ենթարկվում էր խստագույն պատժի:

Կավե սալիկների բնագրերը գիտնականների առջեւ բավական խրթին հարց ծառացրին. ինչո՞ւ ապաքինված Նաբուքոդոնոսորը ոչ միայն չկարգադրեց վերացնել այդ բնագրերը պարունակող կավե սալիկները, որոնցում հիշատակվում էր իր հիվանդությունը, այլեւ նույնիսկ հենց ինքն էլ այդ մասին հայտնում է գալիք սերունդներին:

Հավատացյալ հնագետների համար աստ որեւէ տարօրինակ բան էլ չկա. չէ՞ որ դա վկայում է այն մասին, որ Աստված խոնարհեցրել էր Նաբուքոդոնոսորին եւ նրա չափնանց մեծամտությունը: Սուրբ Գրքի վկայության համաձայն՝ արքան հրաշքով ապաքինվելուց հետո հրամայեց հավերժացնել իր հետ տեղի ունեցածը՝ ի խրատ գալիք սերունդների: Որպեսզի բոլորը՝ մեծերն ու փոքրերը, իմանան, որ Աստված կա եւ կարող է խոնարհեցնել բոլոր նրանց, ովքեր կհպարտանան:

Ոչ պակաս ուշագրավ մի հանգամանք եւս. այն ժամանակ տիրող բոլոր օրենքների եւ սովորույթների համաձայն՝ ցավագար արքային կամ պետք է սպանեին, կամ գահընկեց անեին: Բայց այդ բանը չարվեց: Այդ հիվանդության, դրա ժամկետի եւ բժշկման մասին կանխասացությունները հայտնել էր Դանիել մարգարեն, ինչը նշանակում է, որ այդ իրավիճակը, ըստ ամենայնի, Աստծու վերահսկողության ներքո էր գտնվում: Այլ կերպ ասած՝ Նաբուքոդոնոսորի ճակատագիրն Իր ձեռքում էր պահում Ինքը՝ Տերը:

Ռուսերենից թարգմանությունը՝
Գրիգոր ԴԱՐԲԻՆՅԱՆԻ

Դարավոր պայքար

↩ էջ 4, 5

Հայերը պարտավոր էին կատարել նրանց կամքն ու ցանկությունը, ստրկորեն ծառայել: Մինչդեռ նյութական միջոցները շատ սուղ էին, քանի որ քոչվոր սելջուկները բերրի դաշտավայրերը դարձրին արոտավայրեր, եւ ուժասպառ հայ գյուղացին հազիվ էր քարշ տալիս իր գոյությունը: Հայաստանում մտցվեց սելջուկյան ռազմաֆեոդալական հողատիրության համակարգը, որով հողը՝ իր բնակչությամբ, դառնում էր տիրակալի սեփականությունը: Տիրակալներ էին սելջուկյան սուլթանը, նրա ընտանիքի անդամները, մելիքները, ամիրաները եւ այլ պաշտոնյաներ: Տարածված էր իկթան, երբ բաժնեկալվածքներ էին տրվում զինվորականներին: Դա կատարվում էր նվաճված հողերի հաշվին, որոնց նախկին տերերը կամ ոչնչացված էին, կամ արտաքսված, գաղթեցված: Սելջուկներն այդպես վարվեցին ֆեոդալների հետ, ինչը հաստատվում է նաեւ ժամանակակիցների վկայությամբ. «Իշխանները զրկվեցին իրենց հայրենի ժառանգությունից ու պանդխտեցին օտար երկիր. գավառներն ավերվեցին ու կողոպտվեցին.... ավանները դարձան գազանների բնակավայր, իսկ նրանց անդաստանները՝ երեների արոտատեղի»: Սելջուկ-թուրքերն այդպես վարվեցին նաեւ հայ եղեկեցական կալվածքների հետ, բայց հետո մեղմացրին իրենց վերաբերմունքը, որպեսզի սիրաշահեն հոգեւորականությանը եւ ամրապնդեն իրենց դիրքերը: Որոշ հայ իշխաններ վերականգնեցին իրենց հողատիրության իրավունքը, բայց նրանք պարտավոր էին հարկ վճարել սուլթանին կամ իկթադար՝ մելիքին. ցանկացած ժամանակ նրանք կարող էին զրկվել ամեն ինչից:

Բոլորովին անտանելի էր գյուղացիների վիճակը: Նրանք կոչվում էին «ռեայա» կամ «ռայաթ»: Հայ գյուղացիների մեծ մասը հողազուրկ էր եւ դառնում էր վարձակալ հողագործ՝ կախված ֆեոդալից, իսկ մյուս մասը մանր հողատեր էր: Նրանք տերերին տալիս էին հողային ռենտա, խարաջ կամ ջիզյա (գլխահարկ), եկեղեցական եւ այլ հարկեր ու տուրքեր: Գրիգոր Դ Տղա կաթողիկոսը (1173–1193 թթ.), նկարագրելով թափառական հայերի ծանր վիճակը, գրել է. «Նեղեալ եւ զզուեալ են ի հարկապահանջ բռնակալացն եւ կարօտին միայն աւուրն պարենի»:

Քաղաքային բնակչությունը եւս՝ մասնավորապես արհեստավորները, բանջարավաճառները, նպարավաճառները եւ այլք, տառապում էր ծանր հարկերի ու տուրքերի տակ: Ռավենդին շեշտել է, որ սելջուկները թալանչիներ են, որոնք բացի սահմանված հարկերից՝ բնակչությունից գանձում էին տուրքեր հագուստի, գինու, զենքի, պայտի եւ այլնի համար: Այդ ամենին գումարվում էին նրանց կամայականություններն ու բռնությունները, ամեն տեղ սողոսկելու եւ կողոպտելու մոլուցքը: Արաբախոս Նեսեւին (ԺԳ դարի հեղինակ) նշել է, որ թուրքերը տարածվում էին ինչպես մորեխ, ծածկում դաշտերը, լեռները, բոլոր բաց տարածությունները եւ ծծում եղած հյութերը: Չկար անձի եւ գույքի ապահովություն: Կատարյալ պատուհաս էր գերեվարությունը, որն ուղեկցվում էր ստրկավաճառությամբ, մարդկանց ոչնչացմամբ, գանակոծությամբ: Գերիներին աշխատեցնում էին որպես ստրուկներ տներում, կալվածքներում, ճանապարհաշինության համար, հանքերում եւ այլուր: Գերիների մի մասին էլ շահագործում էին ռազմական ջոկատներում:

Սելջուկյան արշավանքներն ու տիրապետությունը Հայաստանում ավերիչ եւ կործանարար էին: Խաշնարած ու քոչվոր սելջուկ-թուրքերը խոշտանգում էին հայ ժողովրդին, հետ մղում նրա տնտեսական եւ մշակութային առաջընթացը:

Շարունակելի

ԱՆՈՒՇ ԱՂԱՍԱՐՅԱՆ

✠ ՀԵՏԱՔՐՔԻՐ ՓԱՍՏԵՐ

Աստվածաշունչը բարձունքի մասին

Բարձունքների վերաբերյալ պահպանվել եւ մեզ են հասել տարաբնույթ ավանդազրույցներ, հեքիաթներ, ասքեր:

Վավերագրական տեղեկությունների համաձայն՝ հնագույն բազմաթիվ ազգեր, ինչպես օրինակ՝ քանանացիները, երկնային մարմիններին երկրպագում էին բարձունքի՝ բլուրների կամ լեռների վրա: Հայտնի է նաեւ, որ ֆետիշիզմի եւ տոտեմիզմի տարածման շրջանում կուռքերը հիմնականում կանգնեցվում էին բարձրադիր վայրերում:

Հին կտակարանում եւս վկայություններ են առկա բարձունքների, բարձրադիր վայրերի վերաբերյալ: Այսպես՝ Աստված իսրայելացիներին պատվիրում է ոչնչացնել կռապաշտական այս վայրերը. *«Ոչնչացրեք բարձր լեռների, բլուրների վրա ու վարսավոր ծառերի տակ գտնվող բոլոր վայրերը, ուր մյուս ազգերը պաշտել են իրենց կուռքերին, եւ որոնց դուք պիտի տիրանաք: Քարուքանդ արեք նրանց բագինները, ջարդուփշո՛ւր արեք նրանց կոթողները, խորտակեք նրանց հուշասյուները եւ կրակի մատնեք նրանց տաշածո կուռքերը»* (Բ Օր. ԺԲ 2): Սակայն վերջիններս չեն հնազանդվում, չեն կատարում տիրավանդ այս պատվիրանն ու նմանվում են հեթանոսներին:

Աստվածաշունչ մատյանը վկայում է նաեւ, որ իսրայելացիները Տիրոջը հաճախ երկրպագում էին բարձրադիր վայրերում (տես Ա Թագ. Թ 12, Գ Թագ. Գ 4): Հինկտակարանյան որոշ հատվածների համաձայն՝ Իսրայելի արքաները բարձունքի վրա մեհյաններ էին կառուցում հեթանոսական կուռքերի երկրպագության համար (տես Դ Թագ. ԺԵ 10–11). *«Այն ժամանակ Սողոմոնը Երուսաղեմի դիմաց՝ լեռան վրա, մի մեհյան կառուցեց մովաբացիների կուռք Քամոսի համար....»* (Գ Թագ. ԺԱ 7): Բարձունքի վրա կառուցված մեհյանները կոչվում էին *«բարձրադիր կռատներ»* (տես Գ Թագ. ԺԳ 32, Դ Թագ. ԺԵ 29): Դրանք ունեին իրենց քուրմը (տես Դ Թագ. ԺԵ 32). *«Հերոբովամը տոն կատարեց, ութերորդ ամսի տասնհինգերորդ օրը տոնական օր սահմանեց.... Նա Բեթելում կառուցած մեհյանում քրմեր նշանակեց....»* (Գ Թագ. ԺԲ 32):

Ըստ հինկտակարանյան հատվածների՝ անտառներն անգամ նվիրված էին հեթանոսական այս կամ այն չաստծուն (տես Ծննդ. ԻԱ 33), իսկ բարձունքները կռապաշտության վայրեր էին (Դ Թագ. ԺԳ 15): Ահա այս էր պատճառը, որ երկնային Հայրը իսրայելացիներին պատվիրում է տոներն ու զոհաբերությունները միայն Երուսաղեմում՝ Իր տաճարում կատարել, որ ճշմարիտ եւ կենդանի միակ Աստծու ժողովուրդը գայթակղության մեջ չընկնի, այլ միաձայն վկայի կռապաշտության դեմ:

Մարգարեները հանդիմանում էին իսրայելացիներին՝ բարձունքների վրա կռապաշտարաններ կառուցելու համար, մանավանդ որ Աստված պատվիրել էր կործանել, ոչնչացնել դրանք: Այսպես՝ Ովսե մարգարեն ասում է. *«Լեռների գլխին զոհ էին մատուցում եւ բլուրների վրա ողջակեզ էին անում կաղնիների, կաղամախիների եւ սաղարթախիտ ծառերի տակ....»* (Դ 13):

Թեւպետ Իսրայելի թագավորները հիմնականում նախանձախնդրորեն հետեւում էին Օրենքի պահպանմանը, սակայն Սուրբ Գրքում հիշատակվում են քչերը, որոնք իրագործում են Աստծու պատվիրանը եւ կործանում կռապաշտարանները:

Բարձունքները հիշատակվում են նաեւ դրական նշանակությամբ:

Հին կտակարանում խոսվում է Թաբոր լեռան մասին, որը գտնվում էր Գալիլեայում՝ Իսրայելի դաշտից հյուսիս-արեւելք: Այս լեռը կոնաձեւ էր, անտառային: Ըստ Ա Մնացորդաց գրքի՝ հնում Թաբոր լեռան վրա ամուր քաղաք է եղել. գագաթին դեռեւս պահպանվել են հին պարսպի ավերակները:

Աստված տասնաբանյա պատվիրանները Մովսեսին հայտնում է բարձունքի՝ Սինա լեռան վրա (տես Ելք ԺԹ, Ի):

Նոր կտակարանում եւս բազմաթիվ հատվածներ կան, որտեղ հիշատակվում է բարձրադիր այս կամ այն վայրը: Մատթեոսի ավետարանում նկարագրվում է, թե ինչպես Աստծու Որդին բարձրացավ լեռան վրա (անունը չի հիշատակվում), եւ Նրա շուրջը հավաքվեցին աշակերտներն ու ժողովրդի բազմությունը. Քրիստոս սկսեց ուսուցանել եւ քարոզել նրանց («Լեռան քարոզը», Ե 1–11):

Բարձր լեռան մասին վկայություն կա նաեւ Հիսուսի պայծառակերպության դրվագում. *«Վեց օր հետո Հիսուս Իր հետ վերցրեց Պետրոսին, Հակոբոսին եւ Հովհաննեսին ու առանձին նրանց հանեց մի բարձր լեռան վրա եւ նրանց առաջ պայծառակերպվեց»* (Մարկ. Թ 1): Ըստ ավետարանական ավանդության՝ խոսքն այստեղ Թաբոր լեռան մասին է:

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի խաչելության վայրը՝ Գագաթը, եբրայերեն՝ Գողգոթան, ոչ շատ բարձր բլուր էր եւ գտնվում էր Երուսաղեմի պարիսպներից դուրս՝ դեպի հյուսիս-արեւմուտք (տես Հովհ. ԺԹ 17–18):

Սուրբ Գրքում վկայություններ կան նաեւ Ձիթենյաց լեռան մասին (Բ Թագ. ԺԵ 30, Դ Թագ. ԻԳ 13, Եզեկ. ԺԱ 23, Զաք. ԺԴ 4, Ղուկ. ԺԹ 29, ԼԷ, ԽԱ–ԽԴ, ԻԱ 37). այն ունի մոտ 830 մ բարձրություն, գտնվում է Երուսաղեմ քաղաքի արեւելյան կողմում՝ Կեդրոն գետի ափին, հնում պատված է եղել ձիթենու ծառերով: Գեթսեմանիի պարտեզը, որտեղ Հիսուս աղոթեց մատնությունից եւ ձերբակալությունից առաջ, Ձիթենյաց լեռան լանջին էր գտնվում (տես Ղուկ. ԻԲ 39): Աստվածաշնչի համաձայն՝ Հիսուս Քրիստոս երկինք համբարձվեց Ձիթենյաց լեռան վրայից (Գործք. Ա 9–12):

ԱՐՓԻՆԵ ՉԱՆԹԻԿՅԱՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏՈՆԵՐ

ՕԳՈՍՏՈՍ

† Տոն Շողակաթի Ս. Էջմիածնի՝ ըստ Սուրբ Գրիգոր Լուսավորչի տեսիլքի – *օգոստոսի 12*

† Տոն Սուրբ Աստվածածնի վերափոխման – *օգոստոսի 13*

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Արփինե Չանթիկյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝
qristonyahayastan1@gmail.com
qristhay@etchmiadzin.am
web կայք՝
krishayas.wordpress.com
etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan
Ստոր. տպագր. 1.08.2023 թ.
Տպաքանակը՝ 1265